2001, ՀՈՒՆՎԱՐ Ա, ԹԻՎ 1(93)

# Էջմիածնի Տարեգիրք

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԱՐԵՄՈՒՏԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՍԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Սիրելի ժողովուրդ հայոց:

Տարեմուտի վերջին ռոդեներն են մեզ բաժանում նոր հազարամյակի սկիզբն ազդարարող 2001 թվականից: Ամենս լավաստեսությամբ համակված եւ հուսառաս հոգով, բարի ակնկալիներով մուտ ենք գործում նոր դարաշրջան, որը ազգային մեր կյանքում բացվում է Հայոց Մեծ Դարձի՝ Հայասանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի փառաշուք հոբելյանով:

Ամանորի խորախորհուրդ այս գիշեր մեր հայացքները ուղղված են երկինք, ճանգի հավատում ենք, որ քրիստոնեական մեր կյանքի մեծ հոբելյանը Աստծո կոչն է մեր ժողովրդին վերստին դառնալու դեպի Փրկիչը մեր Հիսուս Քրիստոս, եւ իբրեւ փոքր ժողովուրդ՝ մեծ լինելու Աստծո առջեւ, ինչպես 1700 տարիներ առաջ:

Փառք, պատիվ եւ երկրպագություն Հորը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն, որ արժանի դարձրեց Մեզ՝ որպես Հայրապետ Ամենայն Հայոց, անկախ մեր Հայրենիքի խաղաղ երկնքի ներքո, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեր ժողովրդի զավակներին ծանուցելու քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարությունների սկիզբը եւ բերկրանքով տրի հրավիրելու մասնակցություն բերել հանդիսություններին:

Տարեմուտի բերկրալի այս պահին Մեր առաջին պարտն է խոնարհվել լուսահոգի Վազգեն Ա եւ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսների հիշատակի առջեւ, որ հորդորեցին մեր պետությանն ու ժողովրդին արժանավայել հանդիսավորությամբ տոնախմբել հայրենական մեր կյանքի մեծագույն իրադարձության 1700-ամյակը: Հուզմունքով ենք հիշում այն օրը, երբ Վազգեն Հայրապետը, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու տեսիլը հոգում ծրարած, օրհնեց հողը եւ ասաց. «Հավանաբար այստեղ չեմ լինելու, բայց գուցե կիրեմ ինձ, համենայն դեպս, երանի այն հայերին, որ այդ պահին, այդ օրը 2001 թ., պիտի լինեն այստեղ»:

Երանին մեզ է տրված, ի Հայասան եւ ի Սփյուռս ապրող հայորդիներիս, որ այսօր, ահա, 2001 թվականի տարեմուտն ենք ապրում եւ մեր հայացքի առջեւ ոչ թե լուսեղեն տեսիլքն ունենք Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու, այլ նրա հոյակերտ իրական սլացքը:

Սիրելի հայորդիք, հոբելյանական հանդիսությունների մեր առաջին քայլը թող լինի ուխտի կանգնել Հայոց 131 հայրապետների ու մեր քրիստոնեական ժառանգությունը կերած սուրբ նախնյայց հիշատակի առջեւ եւ աղոթել առ Աստված, որ մեր ժողովուրդը Առաքելական մեր Մայր Եկեղեցու օրհնության ներքո շարունակի հավատով վերածնված, միությամբ զորավոր ստեղծագործ իր կյանքը՝ սրբազան առաքելությունը հայրենաշինության:

20-րդ դարը պատմություն է այլեւս՝ արձանագրած իր նվաճումներով ու կորուստներով, պարգեւած բերկրանքով ու ցավերով, փառավոր ու ամոթալի էջերով: Նոր դարաշրջան է բացվում աշխարհի վրա՝ հասարակական կյանքի նորացող ընթացքով: Նոր դար եւ հազարամյակ մեր ժողովուրդը թեւակոխում է ազատ Հայաստանի ու Արցախի 10-ամյա գոյության հպարտությամբ՝ ստեղծած եղեռնահար մեջքը, թոթափած խորհրդային բռնությունն ու անաստվածությունը, հաղթանակած ազատագրական պայքարում, բայց նաեւ՝ Հայրենիքում աղքատության, գործազրկության, արտագաղթի դեռ շարունակվող հոգսերով ու դժվարություններով, վշիռների սղաստող բազում խնդիրներով ծանրաբեռն:

Արդարեւ, հայրենական մեր կյանքն այսօր կարոտ է վերաշինության, առողջացման, կառուցողական հաղթանակների, որոնց կենսավիշը միաբանությունն ու սերն է: Շաղախենք մեր կյանքը սիրով: Աստվածային սուրբ Սիրով, որ բժշկում, ամոքում է վշտացած հոգիներ, կյանք պարգեւում անկյալ մարդուն ու վերափոխում աշխարհը: Սիրո նորոգությամբ զորացնենք ազատ ու անկախ մեր Հայրենիքը, բոլորվենք նրա շուրջ եւ միասնաբար կերտենք նորոյա պատմությունը մեր՝ հայ կյանքը աշխարհապիտուն:

Շաղախենք մեր կյանքը սիրով: Սերը իշխանավորի բարիք ու շինություն է երկրին, սերը եկեղեցականի՝ հավատ, ապրելու բերկրանք ու արարելու կամք է ժողովրդին, համընդհանուր սերը՝ համազգային առաջընթացի ու աղահովության, վաղվա երջանիկ օրվա պայման: «Սէր ոչ երբեմ անկանի»: Յուրաքանչյուրս առանձին եւ բոլորս միասին ազգային մեր կյանքում արժեւորենք հոբելյանական նոր տարին: Հավատանք, աղոթենք ու ձգտենք, որ 1700-ամյակի վսեմ խորհուրդը զարթեցնի մեր մեջ հայի հրիսոնասեր, արի, արժանապատիվ հոգին: Նոր կյանք սկսենք վերադառնալով մեր սուրբ հավատին, եկեղեցական-ազգային ավանդույթներին, պատնեշելով խորթ ու օտար բարերի հոսքը մեր Հայրենիք, հայ իրականություն: Բավարար չէ միայն անունով քրիստոնյա լինել, հավատավոր գործերով վկայենք, որ արժանի ենք «քրիստոնյա» անվանը եւ քրիստոնյա առաջին պետությունն ունենալու պատվին ու պատասխանատվությանը, մեր հայրերի Աստծո օրհնությանն ու շնորհներին:

Մեր պատմության այս հանգրվանին, երբ բազմահազար հայորդիք հեռու Հայրենիքի մաքուր երկնից, Արարատի վսեմ հայացքից, Միածնէջ Ս. Տաճարի աղոթաբույր տեսից, իրենց կյանքն են կառուցում աշխարհի տարբեր երկրներում, Հայրապետիս կոչն ու պատգամն է ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս ապրող մեր ժողովրդի զավակներին արծարծ ոգիով Հայրենիքի սերը, հավատարմությունը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, լինել նախանձավոր ազգային գիտակցության եւ նրանից բխած պարտականությունների հանդեպ: Գիտենանք, թե մեր պարտքի հանձնառությամբ, համախումբ ջանքերով պիտի կերտենք նոր օրը մեր կյանքի, որպեսզի չկրկնվեն անցնող դարում մեր ժողովրդի հանդեպ գործված անարդարությունները, մեր կրած կորուստները, ապրած տագնապները ու դժվարությունները:

Սիրելի աշխարհասփյուռ ժողովուրդ հայոց, զավակներ Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: Ամանորի առիթով շնորհավորում եւ Մեր բարի մաղթանքներն ենք բերում ձեզ ի ծագս աշխարհի: Թող նոր դարն ու հազարամյակը, Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակը ավետող 2001 թվականը բարիք ու երջանկություն բերի ամենքիս եւ լինի հոգեւոր վերածննդի ու ազգային վերազարթոնքի տարի: Զորանանք հավատով, որ կյանքն իմաստնանա Աստծո ներկայությամբ: Մեկտեղվենք մեր սիրելի Հայրենիքի շուրջ եւ ուխտավորի մեր գավազանն ի ձեռին Սուրբ էջմիածին գանք մեր ուխտը վերանորոգելու Աստծո հետ: Նա է երկնավոր մեր Հայրը, հույսն ու աղավեղը մեր, իսկ մենք Նրա ժողովուրդը: Ծառայենք Աստծուն ծառայելով մարդկանց, մեր ընտանիքներին, ժողովրդին ու Հայրենիքին:

Լուսավորչահաստաս Ամենայն Հայոց հայրապետական գահից աշխարհի խաղաղության, մեր երկրի աղահովության ու բեռնացման, մեր ժողովրդի բարորության համար աղոթք առ Աստված վերառաքելով բացված ենք հայաստանում Հայոց Մեծ Դարձի՝ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի պատշաճ հանդիսությունները:

Շնորհավոր Ամանոր, բարի հոբելյանական տարի:

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ՝ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԱՌ ԱՍՏՎԱԾ

### 2000 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31, ԽՈՐՎԻՐԱՊ-ԷՋՄԻԱԾԻՆ-ԵՐԵՎԱՆ

*Դեկտեմբերի 18-ին Խորվիրապում՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի չարչարանաց վիհում, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի 12 միաբաններ հատուկ արարողությամբ վառեցին Սբ. Գրիգոր Լուսավորչի լույս կանթեղը՝ իբրեւ խորհրդանիշ հայ ժողովրդի դարավոր հավատի եւ գոյատեւության: Մինչեւ դեկտեմբերի 31-ը 13 օր շարունակ, որ խորհրդանշում են չարչարանաց 13 տարիները, սուրբ կանթեղը վառվեց՝ երեկոյան խաղաղական ժամերգության ու աղոթքների ներքո:*

Լուսավորչի չարչարանաց տարիներին հաջորդեց հայ ժողովրդի պատմական հոգեւոր դարձը, որ մի նոր զորություն հաղորդեց մեր ժողովրդի գոյատեւությանն:

Դեկտեմբերի 31-ին՝ երեկոյան, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը, արքեպիսկոպոսների եւ եպիսկոպոսների ուղեկցությամբ, Մայր Աթոռ Սուրբ էջմիածնից մեկնեց Խորվիրապ:

Համատեղ աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը բարձրաստիճան հոգեւորականների ուղեկցությամբ եւ Լուսավորչի մուսն ի վիրապի խորհրդի յուրաքանչյուր վերադրումով իջավ չարչարանաց վիհը՝ այնտեղից դուրս բերելու Սուրբ Գրիգոր Լուսավորչի լուսավառ կանթեղը:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը, հոգեւորական դասի ու հավատացյալ ժողովրդի ուղեկցությամբ, Խորվիրապից մեկնեց Մայր Աթոռ՝ կանթեղի լույսը փոխանցելու հայոց հոգեւոր կենտրոն՝ Սուրբ էջմիածին, որ վեր է հառել Սբ. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով:

Մայր Աթոռ այցելեց եւ ՀՅ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որ հայոց Հայրապետին դիմավորեց Տղատա դարպասների մոտ:

Շարականների երգեցողության ներքո Վեհափառ Հայրապետը եւ Հանրապետության նախագահը բարձրաստիճան հոգեւորականների եւ բարձրաստիճան պատգամավորների թափորի ուղեկցությամբ շարժվեցին դեպի Մայր տաճար:

Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ՝ փառաբանական աղոթք հղվեց առ Աստված, որից հետո հնչեցին Հանրապետության նախագահի եւ Ամենայն Հայոց Հայրապետի ամանորյա բարեմաղթանքներն ու շնորհավորանքները՝ ուղղված համայն հայությանը:

Ուղիղ կեսգիշերին Հայոց Հայրապետը կանթեղի լույսը փոխանցեց Հանրապետության նախագահին եւ բարձրաստիճան հոգեւորականներին: Տեղի ունեցավ սուրբ լուսավառություն՝ ազդարարելով նոր դարասկիզբն ու 1700-ամյա հոբելյանը: Վեհափառ Հայրապետը Խորվիրապի սրբալույսը փոխանցեց Միածնի էջին Սուրբ սեղանին կանթեղված մեծ կերոնին, որից հանդիսության մյուս մասնակիցները եւս վառեցին իրենց մոմերը:

Նրանք իրենց հետ բերեցին եւ հայրենի օջախներ տարան Սբ. Գրիգոր Լուսավորչի հավատից առ Աստված բխած անմար լույսը՝ փոխանցելու համար բարեկամներին, ընկերներին ու հարազատներին՝ համոզմամբ, որ հոբելյանական 2001 թվականն ընթանալու է Լուսավորչի աստվածադաք լույսի զորավոր հովանու ներքո, եւ որ այդ լուսավոր ընթացքը նշանավորվելու է մի նոր դարձով դեպի հոգեւոր լույսի ակունքները:

Սուրբ մոմավառությունից հետո Վեհափառ Հայրապետը եւ Հանրապետության նախագահը մեկնեցին Երեւան՝ Հանրապետության հրապարակ՝ իրենց հետ տանելով Սբ. Էջմիածնի լուսավառ կանթեղի լույսը:

Վեհափառ Հայրապետի եւ նախագահի բարեմաղթանքներից հետո լուսավորվեց Հանրապետության հրապարակում տեղադրված պետությունը խորհրդանշող կերոնը, տեղի ունեցավ ընդհանուր մոմավառություն:

Այսպես ամենուր տարածվեց հայոց հավատի լույսը՝ դառնալով հոգեւոր վերաբնության, վերազարթոնքի ու լուսավոր աղագայի խորհրդանիշ:

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Կատարվեց Սբ. Էջմիածնի բաց խորանի հիմնաքարերի արարողությունը

Դեկտեմբերի 30-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիսաժեստությամբ կատարվեց Մայր Աթոռի տաճարում կառուցվող բաց խորանի հիմնաքարերի արարողությունը:

Ջեռամբ Վեհափառ Հայրապետի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչ Տ. Սեռուի եպս. Սարգսյանի, Երուսաղեմի հայոց պատրիարքության միաբան Տ. Սեւան եպս. Ղարիբյանի եւ Ռումինիայի թեմի առաջնորդ Տ. Տիրայր արք. Մարտիկյանի սբ. մյուռոնով օծվեցին խորանի բոլոր հիմնաքարերը, որոնց վրա եւ կբարձրանան 4 ավետարանիչների անունները կրող սյուները:

Խորանի օծումը կկատարվի 1700-ամյա հոբելյանական տարում՝ 2001 թ. մայիսին: Սեպտեմբերի 22-ին այս խորանի առջեւ կօրհնվի սրբալույս մյուռոնը: Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հարեւանությամբ կառուցվող բաց խորանի առջեւ հազարավոր հավատացյալներ հնարավորություն կունենան մասնակից լինելու սրբազան արարողությանը:

14 մ բարձրություն ունեցող բաց խորանի կողմին կառուցվում է նաեւ Մայր Աթոռի նոր գլխավոր մուտքը՝ 20 մ բարձրությամբ: Կառույցների հեղինակներն են ճարտարապետներ Ջիմ Թորոսյանն ու Ռոմեն Զուլիակյանը:

Հավատս հիմնաքարերի արարողության՝ բաց խորանի եւ գլխավոր մուտքի հիմքերում տեղադրվեցին հուշագրեր՝ վկայություններ հիմնաքարերի, ինչպես նաեւ շինությունների հովանավորներ Լուիզ Սիմոն Մանուկյանի ու մոսկվաբնակ Սենիկ Գեւորգյանի բարեւարության:

# Գարեգին Բ կաթողիկոսն ընդունեց Եվրոպական խորհրդի պատվիրակությանը

Հունվարի 4-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի պատվիրակությանը՝ կոմիտեի նախագահ, Լատվիայի ԱԳ նախարար Ինդուլիզ Բերզինշի գլխավորությամբ:

Ողջունելով հյուրերին՝ Նորին Սրբությունը մաղթեց, որ նոր հազարամյակը լինի խաղաղության եւ ազգերի ու պետությունների միջեւ համագործակցության գեղեցիկ մի շրջան: Վեհափառ Հայրապետն ուրախությամբ նշեց, որ նոր դարասկիզբը Հայաստանյայց Առաքելական եկեղեցու եւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի համար նշանավորվում է Հայաստանում հրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյա հոբելյանական տարեդարձով:

Հանդիպման ընթացքում խոսվեց Եվրախորհրդին Հայաստանի անդամակցության հարցի մասին, որի քննարկումը Եվրախորհրդում տեղի է ունենալու հունվար ամսին: «Հավատում եմ, որ Հայաստանի ընդունելումը Եվրոպական խորհրդին պիտի նպաստի երկրում ժողովրդավարական սկզբունքների զարգացմանը»,- ասաց Նորին Սրբությունը՝ նշելով, որ եղբայրական համագործակցության պայմաններում Հայաստանը հաստատապես կընթանա առաջընթացի ուղիով: Նորին Սրբությունը նշեց, որ հարցի դրական լուծումն իր նպաստը կբերի նաեւ տարածաշրջանում կայունության ամրապնդմանը:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաեւ Հայ Եկեղեցու նեղկա կացությանը, 1700-ամյա հոբելյանական միջոցառումներին:

# Սբ. Ծննդյան տոնը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում

*«Չկա՞ մեզ մահ, քանի դեռ մեր գործերում ապրում է մեր հավատը»:*

*Գարեգին Բ կաթողիկոս*

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնեց Աստվածահայտնության հրաշափառ տոնը: Դեռ նախորդ օրը՝ հունվարի 5-ին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում բազմահազար հավատացյալներ ճրագալույցի արարողությամբ հաղորդակից դարձան սուրբծննդյան ավետիսին: Պատարագը Սբ. Պատարագ: Վերականգնումից հետո անկրկնելի ջերմությամբ էին ներում մայրավանքի նախաբազադր որմնանկարները, լույսերով էր ողողված նաեւ Մայր տաճարի բակը:

Հունվարի 6-ին Մայր տաճարում մատուցվեց Պատարագ Սբ. Պատարագ:

Պատարագի ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը, սուրբծննդյան իր պատգամն ուղղելով համայն հայ ժողովրդին, ընթերցեց Հայաստանում հրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա մեծ հոբելյանին նվիրված հայրապետական սրբատառ կոնդակը, որ նույն օրը հնչեց նաեւ Հայաստանյայց Առաքելական մյուս բոլոր եկեղեցիներում:

Հավատս Սբ. Պատարագի՝ Հայոց Հայրապետը, ավանդույթի համաձայն, կատարեց Ջրօրհնեքի արարողությունը, որ խորհրդանշում է Քրիստոսի մկրտությունը:

Սբ. Պատարագին եւ Ջրօրհնեքի արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, Հայաստանի Հանրապետության վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Ազգային ժողովի պատգամավորներ, կառավարության անդամներ, նախարարներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիպլոմատներ, Հոգեւոր գերագույն խորհրդի անդամներ, Հայաստանում միջազգային, բարեսիրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, հյուրեր:

Սրբազան Պատարագի արարողությունից հետո Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն եւ հյուրասիրություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետին Սբ. Ծննդյան շնորհավորանքներ հայտնեցին հրավիրյալները:

Սբ. Պատարագի եւ Ջրօրհնեքի ողջ արարողությունն ուղիղ եթերով հեռարձակվեց Հայաստանի Հանրապետության ազգային հեռուստատեսությամբ:

*ՍԱՏՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳ*

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ՈՂՋՈՒՄԻԹԵՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԲԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՓԱՌԱՂ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ
ՍԲԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ
ԵՐԵՍԽՓԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԵԻ�known ԵՒ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

## «Էջ Միածինն ի Հօրէ, եւ լոյս փառաց ընդ նմա»

Նոր Աւետիս է Աստուածայայտնութեան: Արարչական Սիրով վերստին ջերմացել է աշխարհը համայն: Վերստին ունկնդիր ու ձայնակից ենք լուսազգեստ հրեշտակների «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» երկնաձայն օրհներգութեանը: Վերստին մեր հոգիներում բեթղեհէմեան Աստղի լոյսն է զուարթ, «զի ծնաւ մեզ այսօր Փրկիչ» եւ «Էջ Միածինն ի Հօրէ, եւ լոյս փառաց ընդ նմա»:

Գոհութիւն եւ Փառք Ամենակալ Աստծուն:

Հայոց երկնքում՝ լոյսն ի լոյսին Բեթղեհէմի, մեծահանդէս շողարձակում է կանթեղը Ս. Լուսաւորչի եւ Սուրբ Ծննդեան հոգենորոգութեամբ ու շնորհաբաշխութեան բարի սպասումներով լեցուն մեր հոգիները առաջնորդում է դէպի երրորդ հազարամեակ, որի առաջին տարին ազգային մեր կեանքում ոսկեդրոշմ կնքուած է Հայոց Մեծ Դարձի 1700-ամեայ յոբելեանով:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց ի սփիւռս աշխարհի.

Կանգնած Հայաստանի ազատ հողին, հայոց խաղաղ երկնքի ներքոյ որպէս շնորհընկալ Հայրապետ Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լոյս Խորանից բերկրանքօք սրտի Սուրբ Ծննդեան բարի Աւետիսն ենք բերում ձեզ եւ զուարճացեալ մեծաւ ուրախութեամբ ծանուցում Հայոց Մեծ Դարձի Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեան:

Առաքելահաստատ է Հայ Եկեղեցին: 2000 տարի՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս առաքեալների մարտիրոսեալ արեամբ հիմնադիր, հովանէ է Արարատի շուրջ մէկտեղուած Թորգոմի տան ժողովրդին եւ առաջնորդում նրան «ի խաւարէ ի լոյս, ի մահուանէ ի կեանս, յապականութենէ յանապականութիւն, յանգիտութենէ ի գիտութիւն ճշմարտութեան Իւրոյ»:

301 թուականին Ս. Լուսաւորչի անմէջ հայեացքով մեր ժողովուրդը արժանացաւ տեսնելու Յարուցեալ Փրկչի լուսեղէն էջքը հայրենի իր հողում: «Էջ Միածինն ի Հօրէ, եւ լոյս փառաց ընդ նմա» փառաբանութեամբ աշխարհը հայոց առաջի Աստծոյ կանգնեց խոստովանութեան ու տնառնազրեց երկիրը իր հին աշխարհում առաջինը հռչակելով քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն: Համայն ժողովրդով հաւատացի՛նք համակ Սէր, Միակ Ճշմարիտ Աստծուն, Ս. Ծննդեանն ու Մարդեղութեան փրկչական առաքելութեանը Նրա: Հաւատացի՛նք Գողգոթայի վրայ Խաչեալի յաղթական Յարութեանը: Եւ Յարութեան յոյսին խարսխուած կեանքն արփիացաւ Հայոց աշխարհում, Հաւատի, Յոյսի, Սիրոյ գոյներով դրոշմուեց մեր լեռներին, երկինք նայող մեր վանքերին, խաչքարերին, ծաղկեց աղօթախօս մատեաններին, տիեզերքը լուսերգութեամբ ազնուացնող տաղին, շարականին: Աստծոյ շնորհը գտանք մարգարէի խօսքի համաձայն. «Եւ տաց նոցա սիրտ այլ, եւ ճանապարհ մի երկնչել յինէն զամենեցուն աւուրս ի բարութիւն իւրեանց եւ որդւոց իւրեանց յետ նոցա» (Եր 32.39): Աստծոյ շնորհն ընդունեցինք ի բարութիւն մեզ եւ այն կեանքի ճանապարհ, շնորհ դարձրեցինք: Յոյս գտանք մեր անյուսութեան մէջ, անգիտութեան մէջ՝ իմացութիւն, մեր թուլութեան մէջ՝ ուժ եւ օրհասի մէջ՝ վերածնունդ:

Այսպէս, սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, ուխտ կապեցինք Աստծոյ հետ:

> **«Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կաղեալ կայ» հաւատով ու գիտակցութեամբ եւ մեր յաւերժութեան խորհուրդ Մայր Տաճարով կամարեցին Մայր Տաճարով կամարեցին Միածնի Էջքի Սուրբ Սեղանը Խորանը Ուխտի որդէս Աստծոյ ոնեահոգումի երկնահայեաց քարեղէն դրոտ, որ 17 դար սերնդէսերունդ պատկերագրում է հայորդեաց հոգիներում:**

Արդարեւ, մենք մեծաթիւ ժողովուրդ չենք եւ երբեք չենք եղել: Բայց մեր հաւատը՝ գործերի փոխուած, դարձրել է մեզ մեծագործ ժողովուրդ: Հաւատի գործերով մենք մարմնաւորել ու հաւաստել ենք մեր սէրն առ Աստուած: Հաւատով մենք մէկ եղ ենք որպէս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, որ հաւատի կենդանի գործերով «դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ունի»: Հայ Եկեղեցին հայ ժողովուրդն է՝ քրիստոնեական սուրբ հաւատով միաանական, ինքն իրեն Հայ Եկեղեցիով ճանաչող ու արտայայտող: Նայենք հայ կեանքի անդաստաններին: Քրիստոնեական համամարդկային արժէքներով, ազատութեան, արդարութեան, խաղաղութեան ձգտումներով է հանդերձաւորուած հայ ինքնութիւնը, որով հակառակ մահաշունչ փորձութիւնների, դարերի մէջ արարել է միշտ, ի զօրու գտնուել հաղորդ լինելու եւ ներդրում բերելու մարդկային քաղաքակրթութեան առաջընթացին: Հայոց Սուրբ Եկեղեցուց աղբիւրացող հաւատով կեանք առած աշխարհասփիւռ հայ հոգիները հաւատով դարեր են կամրջել՝ հաստատուն ու կենսունակ պահելով մարդկային այն առանձնայատուկ ընդհանրութիւնը, որ «ազգ» եւ «ազգային» ենք կոչում: Հաւատն է ոգեշնչել ու թեւ տուել մեր բոլոր յաղթանակներին: Հարանց մեր հաւատով զինվա՛ մեր ժողովրդի զաւակունք չեն երկնչել մահից՝ յանուն հայրենեաց պայքարում մահկանացու իրենց կեանքը բազմիցս զարդարելով անմահ փառաց պսակով: Հաւատով մերժել ենք սուտն ու երեսպաշտութիւնը, վատութիւնն ու վախկոտութիւնը, հաւատով սիրել ու նուիրուել մեր ընտանիքին, Հայրենիքին, Եկեղեցուն, հաւատով ապրել Աստծոյ հետ ու արժանացել ամենառատ օրհնութեանը Նրա: Այո, սիրելիներ, չկա՛ մեզ մահ, քանի դեռ մեր գործերում ապրում է մեր հաւատը, քանի դեռ հայոց պատմութեան ընթացքով յաղթականօրէն անցնում է լուսեղէն թափօրը Հայ Եկեղեցու ճառագելով հաւատք ու իմրոնելով հոգի, հաւատարմօրէն պահելով մեր ժողովրդի ընթացքը դէպի Աստուած:

Այսօր մենք վերապրում ենք անցեալի մեր սուրբ յիշատակները եւ մեր կողքին զգում իրական ներկայութիւնը մեր նախնեաց, որ ապրել ու գործել են հոգու իրենց հայեացքի առջեւ քրիստոսադրոշմ մեր այսօրը ունենալով: Նրանք՝ յայտնի ու անյայտ անուններով, բիւր վկաներն են Քրիստոսի հող հայրենին պաշտպանող զինուոր ու զօրավար, հող հայրենին շէնացնող շինական ու արհեստաւոր, երկիր կառավարող արքայ ու նախարար, շնորհալի կաթողիկոս, քերթող վարդապետ ու դեռնդ երէց, որ երկնային իրենց բարձունքներից աղօթակից են մեզ, որպէսզի հայոց ազգային կեանքի մեծագոյն իրադարձութեան դարադարձը նոր ելք դառնայ անհաւատութեան ու թերահաւատութեան խոր ու խաւար վիրապից, Աստուածային էջքի նոր տեսիլքով նոր դարձ դառնայ դէպի Քրիստոս:

Ազատութեան յուսաբեր շունչն է թեւածում հայրենի մեր եզերքներում: Հայաստանի նոր անկախութեան հաստատումով, Արցախի ազատութեան նուաճումով հայութեան հոգուց բօքափուել են եղեռնի միացող վիշտը, խորհրդային անաստուածութեան տասնամեակների ճնշող բեռը, ուերիչ երկրաշարժի կորուստների ցաւը, եւ ինքնաբերութեան ու ազգային մեր իրաւունքների պաշտպանութեան առաջին յարդանակների բերկրանքով հաստատուել են լաւատեսութիւնն ու վստահութիւնը: Վերապրած տնտեսական ու քաղաքական կեանքի փորձութիւնների տագնապներ, մենք կանգնած ենք հոգեւոր ու ազգային-հասարակական մեր կեանքի վերաշինութեան ճանապարհին:

Մեր պատմութեան որոշիչ այս շրջանում հարկ է, որ հաւատով ու քրիստոնէական ճշմարիտ արժէքներով իմաստաւորենք մեր կեանքը: Գիտակցենք Հայ Եկեղեցու դերակատարութիւնն իր կոչման բարձունքում, որպէսզի հասարակական մեր կեանքում Հայ Եկեղեցին իրապէս դառնայ խիղճը եւ երաշխաւորը բարոյականութեան, ժողովրդի կամքի արտայայտիչը պետութեան առջեւ եւ պետութեան աջակիցը ժողովրդին ծառայելու սրբազան կոչման մէջ:

*Շարունակությունը էջ 3*

*Սկիզբը էջ 2*

**1700-ամյակի միասնող ոգով եւ հաւասակերս խորհրդով ընդառաջ գնանք ու վճիռներ գտնենք հոգեւոր-ազգային մեր կեանքի հրատապ խնդիրներին ու մարտահրաւէրներին: Մրբագրենք մեր դատմութիւնը աղճատումներից ու ստկենք ժամանակների հարկադրանքները:**

Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնների միջեւ տարաձայնութիւնների հարթումով ձեռնամուխ լինենք Հայ Եկեղեցու ներքին բարեկարգութեանը, 2000-ամեայ քրիստոնէական ժառանգութեամբ գործուն մասնակցութիւն բերենք ազգերի, կրօնների ու եկեղեցիների համեղբայրութեանը: Քայլենք նուիրական մեր իդեալի իրականացման վճռականութեամբ որպէս մէկ եկեղեցի, մէկ պետութիւն եւ ազգ:

Տիրաւանդ սիրով, Սուրբ Ծննդեան եւ Հայոց Մեծ Դարձի 1700-ամեայ յոբելեանի Աւետիսներով ողջունում ենք Հայ Եկեղեցու նուիրապետութեան Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին, Հայ Եկեղեցու զինուորեալ ողջ հոգեւոր դասին:

Հայրապետական Մեր ողջոյնն ենք բերում Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց Նախագահներին, պետական այրերին եւ բարեպաշտ հաւատացեալ մեր ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս:

Հայրապետական պատգամ ու յորդոր ենք յղում աշխարհասփիւռ մեր զաւակաց 2001 թուականի ողջ ընթացքում արժանիօրէն տօնակատարել պանծալի յոբելեանը՝ արժեւորելով նրա խորհուրդը ազգային եւ համաքրիստոնէական կեանքում: Իւրաքանչիւրս վառենք մեր մոմը հայոց միասնականութեան խորհուրդ Տաճարում Միածնէջ Սուրբ Խորանի առջեւ: Հայ Եկեղեցու սուրբ աւազանը դարձնենք մեր հոգու ծննդավայրը: Քրիստոսադրոշմ կնքենք մեր զաւակներին՝ ունկնդիր լուսաբնակ Վազգէն Ա Հայրապետի հրաւէրին. «Միտոնը տաք է, ձեզ է սպասում»:

Քրիստոնեայ առաջին պետութիւնն ու ազգը լինելու իրողութիւնն այսօր սոսկ հպարտութեան առիթ չպէտք է լինի մեզ համար, այլ պատասխանատուութեան քաջալերող ու ոգեղէն կոչ: Պարտք ունենք մեր Հաւատն ու Հայրենիքը պահպանած ու մեզ ժառանգած մեր նախնեաց, այս հողը մեզ շնորհած ու Միածնի Էջքով այն սրբացրած Աստծոյ առջեւ: «Եւ մի լիցի մեզ» տկարանալ ու ընկրկել մեզ վիճակուած հրամայականների առջեւ, թերանալ առ Հայրենին մեր պարտքի ու պատասխանատուութեան, առ Աստուած մեր սուրբ ուխտի մէջ: Թող մեր եռանդը կորովի փոխուի, ու մեր սէրը անձնազոհութեան, թող հոգու, մտքի ու ձեռաց մեր հաւատարս ու հայրենաշէն գործերը լայնահուն բացեն հայութեան կեանքի նոր հազարամեակի ուղին եւ անցաւոր ժամանակի մեր այսօրը կապեն յաւերժին:

Փա՜ռք քեզ, հայրենաբնակ իմ ժողովուրդ, որ հակառակ կրած փորձութիւնների եւ ներկայ կեանքի բազում դժուարութիւնների, ձեռնամուխ ես հայրենաշինութեան սուրբ ու նուիրական գործին: Փա՜ռք քեզ, Սփիւռքի իմ ժողովուրդ, որ հաստատուն ու ամուր կամքով սատար ու զօրավիգ ես Մայր Հայրենիքի վերակառուցմանը, եկեղեցաշինութեանը, բաղաքների բարեկարգմանը, բանակի զօրացմանը, կրթութեան ու գիտութեան առաջընթացին՝ արդար քրտինքդ շաղախելով Հայաստանի ու Արցախի հարազատ բոյրերի ու եղբայրների մաքառումներին ու ազնիւ աշխատանքին: «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» հայոց նոր ուխտի, ամենայն հայոց գալիքի:

Բեթղեհէմեան Աստղն է պայծառ շողում երկնքում եւ առաջնորդում մեր ճանապարհը դէպի ծննդեան այրը Մանուկ Յիսուսի: Թող մեր սրտերը այսօր տրոփեն հայոց Բեթղեհէմ Սուրբ Էջմիածնի աւետաբեր զանգերի կանչող ղօղանջով եւ առ Աստուած ձայնեն մեր հողում հնչած բիւր աղօթքների երկնահաս խօսքով: Թող մեր մտքերը թափանցեն խորքը ժամանակների՝ իր մեծութեան մէջ ամբողջապատկեր տեսնելու համար յաւերժահայեաց սուրբ Մասեաց դիմաց հրաշակերտուած խորին խորհուրդը Հայոց Մեծ Դարձի՝ նորոգ հաւատով եւ նորոգ կեանքով այն փոխանցելու նոր սերունդներին: «Այսօր է, զոր արար Տէր, եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք» (Սղ 117.24), «քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Մեզ. ՕՁ մեծ Աւետիս:

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*Տուաւ Կոնդակս ի 6-ն Յունուարի*
*ի Տօնի Սուրբ Ծննդեան*
*Յամի Տեառն 2001 եւ ի բուին Հայոց ՌՆԾ*
*ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի*
*ընդ համարաւ 34*

Ացնող խան դարերու ժամանակամիջոցին իմաստուն մոգերու ճանապարհը լուսաւորող երկնային աստղին մասին շաս հարցումներ եղան, եւ շաս մեկնութիւններ տրուեցան:

Հարցնենք արդեօք ինչ կրնայ ըլլալ այս աննախադէպ ու զարմանահրաշ երեւոյթը, որ Արեւելքի գիտունները առաջնորդեց, երկար եւ յոգնաշանջ ուղեւորութենէ եսէ, դէպի Մանուկ Յիսուսի խոնարհ մսուր:

Նոր ու լուսաճաճանչ աստղ մը էր՝ տիեզերաշարած ճառագայթումով, որ առաջին անգամ կը բացայայտուէր երկնքի ճակտին, եւ աւետաբեր հանդիսումով երկու մոլորակները կը զօդուէին միմեանց:

Դարուս անհաւանները դեռ կը յամառին յամենայն իրենց կարծրացած տգիտութեան մէջ եւ չեն ուզեր տեսնել այս անգուգական Աստղին մէջ աստուածային լուսաշող նշաշակը:

Արեւելքի մոգերը, ալ յոգնած երկրի վրայ իրենց գիտութեան համար իմաստութեան գանձեր փնտռելէ, սեւեռաբիր յառած էին իրենց աչքերը դէպի երկինք՝ բեր Աստղին, կը մնայ անդարձելի ամէն ճակատագրական մարտահրաւէրի դիմաց:

Պէտք է միշտ զգոյշ ըլլանք, որ փորձութիւններու խորակը չմնէ մեր կեանքէն ներս ու մարէ հաւատքին ջահը:

Քրիստոս թէեւ շաս կարճատեւ կեանք մը ունեցաւ երկրի վրայ, բայց Իր օրինակելի խոնարհութեամբ, հեզութեամբ ու մանաւանդ Իր օրինակելի աղքատութեամբ նուաճեց երկրի ու երկնքի փառքը:

Աշխարհի հզօրագոյն մահկանացուներէն ոչ մէկը կրցաւ իր իմաստութեամբ, իր հանճարով եւ իր իմացական բարձրարժէք ստեղծագործութիւններով աստուածանալ եւ ԱՍՏՈՒԱԾՈՐԴԻ կոչուիլ:

Եկեղեցւոյ մարտիրոսացած սուրբերէն ոչ մէկը, Հին Կտակարանի իմաստուններէն ոչ մէկ մարգարէ եւ ոչ մէկ առաքեալ չհասաւ Գողգոթայի Դասարտեալին յաւիտեաններու փառաւորումին:

Հայ քրիստոնեայ հաւատացեալին համար Միածին Որդին վախճանած սուրբի մը պատկերը չէ, յանուն հայրենիքի պատշաճութեան նահատակուած մսուրէն, բոլորովին կ'ազատագրէ իր կեանքը երկրի կաղանդներէն ու վախերէն:

Ճշմարիտ հաւատով բարեպաշտներն են, որ իրենց արիւնը կը սպառեն յանուն տկար ու անզօր ժողովուրդներու խաղաղութեան եւ արդարութեան:

Բեթղեհէմի Աստղին հաւատով զարհուած հոգին գիտէ, թէ իր պայքարը մեղքին ու մեղադարտին դէմ սուրբ է: Լաւ կը հասկնայ, որ այդ պայքարը լոյսին եւ խաւարին միջեւ յաւիտենական է:

Էականը այն չէ, թէ այդ մշտնջենական ճակատամարտն ինչպէս եւ ուր պիտի յանգի:

Բայց գիտէ, թէ լոյսը միշտ կը փարէաստ խաւարը: Ան լոյսին մէջ որոշ կը տեսնէ յաղթութեան տարը: Եւ որքան աստեն լոյսին եւ յոյսին ճրագը կը մնայ անշէջ, սեւ ուժերը պիտի յաղթուին ու նահանջեն:

Ճշմարտութիւններ կան, անհերքելի ճշմարտութիւններ, որոնք մահկանացու մարդուն սահմանափակ մտքին համար անըմբռնելի են:

Մարդկային իմացականութիւնը ի զօրու չէ թափանցելու գերբնական երեւոյթներու խորհրդաւոր ծալքերուն: Անկարող է լեզուն արտայայտելու զանոնք: Որովհետեւ խօսքն ու մարդկային գիտակցութենէն վեր բնազանցական տարածք ունին:

Եթէ աստուածային յայտնութեան խորհուրդը մեր փոքր ուղեղին մէջ իր բացատրութիւնը գտնէր, այն ատեն Յիսուսի ծնունդը պիտի մերկացնար իր գերբնական տարերէն:

Սուրբերը լուծեցին այդ հարցը հաւատքով, ապրեցան աղօթանուէր կեանքով եւ մարտիրոսացան հերոսավայել պայքարով:

Բոլոր ժամանակներու բարոյական եւ իմացական մեծութիւններն այս լուսաճաճանչ երեւոյթին առջեւ կանգնեցան երկիւղած յարգանքով:

Յիսուս Իր աստուածային էութեամբ կը մնայ տիեզերքի մէջ անմարունակելի ու անդարգելի:

Թէեւ մարմնացաւ ու մարդացաւ, բայց Իր ծնունդէն ետքն ալ երբեք չուեցաւ նիւթական տարածք:

Եղաւ շաս մօտ Իր երկնաւոր Հօր եւ ամենօրեայ շփման մէջ, որպէս կատարեալ մարդ եւ կատարեալ Աստուած:

Հարցնենք հիմա, ի՞նչպէս եւ ի՞նչ հաշիվով պատահեցաւ այս ամէնը: Միայն մէկ պատասխան կրնանք տալ ասոր. ԱՍՏՈՒԱԾ ԳԻՏԷ:

Ով որ չի հասկնար ու չի տեսներ Աստղին խորհուրդին մէջ աստուածային նոպատակը, կը նշանակէ, որ Քրիստոսի առաքելութեան մասին ոչինչ գիտէ: Յաւանաբար, երեւակայեն Զայն ընկերային բարեկարգիչ մը կամ յանդուգն յեղափոխական մը, ոչ աւելի:

Յիսուս այն չէ, ինչ որ անաստուածները կը կարծեն: Ան վառեց երկրի վրայ սիրոյ կրակը, որ այրէ մարդկային կիրքերը, ատելութիւնները, բռնամութիւնները ու բացայայտ սրտին խորաբոխուն իղձերը եւ կամեցողութիւնները:

Իր ծննդեան ու յայտնութեան նոպատակը հասկնալի է միայն ճշմարիտ հաւատացեալներուն, որ է ներքին ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ: Եւ այդ փոփոխութիւնը պիտի ըլլայ ոչ թէ մակերեսային հասկացողութեամբ, այլ սիրոյ եւ հաւատի զօրութեամբ:

*ՎԱՐԴԱՆ ԱՒ. ՔԺՆ. ՏԻԼԿԷՐԵԱՆ*

# ՓԱՌԱՅ ԹՈՂԱՐԻՆ ԾՆՈՒԵԼԸ

## ԱՌԿԱՅԾ ՊԱՀԵՆՔ ԲԵԹՂԵՀԷՄԻ ԱՍՏՂԻՆ ԼՈՅՍԸ

անկէ սղասելով իրենց հոգին ու միտքը հարուցացնող իմաստութեան շողերը:

Ի՞նչ նշանակութիւն ունին այս աննախընթաց երեւոյթին մասին մարդկային տկար մտքէն արձակուած անիմաստ բացատրութիւնները:

Աւելի նախընտրելի պիտի չ'ըլլա՞ր, որ հիմաւուրց քրիստոնեաներու խորհուրդ բարեշաշտութեամբ սեւեռենք մեր ներքին տեսողութիւնը Մանչելի խորհուրդին, որ անդարձելիօրէն համգրաւիչ է:

Պատմութիւնը, որ աւետարանական ճշմարտութիւններով կը պատգամէ մեզի հրաշաղէտը, առասպելախառն եղելութիւն մը չէ, որ աւանդօրէն ընդունինք, այլ արձանագրուած անտարակուսելի վկայութիւն մը է, որուն պէտք է առանց վարանումի հաւատանք:

Աստղ մը չէ բիւրաւոր աստղերու նման ճառագող, որ գիշերները կ'երեւայ եւ աւեւածագին կ'անհետանայ:

Աստղ մը է աւեւափառ, որ մարդկային հոգին կը ջահաւորէ եւ մառախլապատ հորիզոններէն անդին կը բանայ մշտնջենական կեանքին երանութեան դարպասները:

Այս յաւերժալոյս Աստղը անտարակուսելի ու հաւասալի ճշմարտութիւնն է, որ չի մոլորեցներ ուղեւորները, չի մթագներ հաւատքով հրդեհուած հոգիները ու չի հերքեր վկայութիւնները:

Միայն այս Աստղը պէտք է տեսնենք, որ շաս մօտ է մեզի, որ մեր մէջն է, մեր շուրջը եւ ամէն տեղ:

Այս անզուգական Աստղը մեր անհերքելի յոյսն է, մեր միակ մխիթարութիւնն է եւ մեր կեանքը յաւերժութեան ագուցող աղամանդակուռ օղակն է:

Երբ խաւարին փարատումով միւս աստղերը կը շիջին մեր կեանքին վերեւ, ան կը շողայ մեր էութեան ամբողջ տարածին:

Ի՞նչ նշանակութիւն ունին գեհենի դաւադիրներուն շղթայազերծած անկասելի յարձակումները: Ո՞ւր հասան եւ ո՞ւր են բոլոր ժամանակներու անբարիշտները, որոնք հուրով եւ սուրով փորձեցին ջնջել մեր հոգիէն Աստղին լուսաճաճանչ երեւումը:

Այն սիրտը, որ կը յուսայ, կը սիրէ, կը հաւատայ, կը պայքարի եւ իր ճակատագրին ուղղութիւնը կը վստահի աւետարերուի մը յուսակոթողը չէ եւ ոչ ալ աշխարհահռչակ հանճարեղ գիտունի մը հոյակերտ արձանը:

Յատկապէս եղերաբախտ հայերուս համար Քրիստոս Աստուծոյ մարմնացած ու մարդացած Որդին է, հայ ժողովուրդի կեանքէն անբաժան եւ անոր կրած անասելի «զուլումներու» եւ տառապանքից ապրումներուն անզուգական Մխիթարիչն է:

Բեթղեհէմի Աստղը պիտի մնայ յաւէտ բոցավառ ամէն բարեպաշտ հայու սրտին մէջ: Եւ անոնք, որ անաստուածութեան մառախուղին մէջ կը շնչեն ու խաւարին ընծայած դիւրութիւններէն խթանուած մարդիկ կը սպանեն, անոնք իրենց կեանքին ամենաղժբախտ օրը, հոգեվարքի հոնդիններու մէջ պիտի նեղգան գեհենի կրակներուն հրախայթ գալարումները:

Ամէն դարաշրջանի անաստուած բնազդական վայրագութեամբ մաքառեցաւ մարել Աւետաբեր Աստղին լոյսը, որովհետեւ այդ տիեզերաշարած լոյսը կը սարսափեցնէր իր խաւարակուռ հոգին: Ան մութը սիրեց ու պաշտեց եւ մթութեան մէջ միայն կրնար յագուրդ տալ իր չարաշահութիւններուն:

Տարբեր չէ անհաւատներու ապրած կեանքը գիշերային գիշատիչ թռչուններէն, որոնք ծառերու սաղարթներուն մէջ ծուարած ճնճղուկներուն ջարդ ու խուճապ կը պատճառեն:

Աստուածավախ մարդը, որ իր հաւատին լոյսը կ'առնէ Մանուկ Յիսուսի

ԱՐՍԵՆ ԱՐՔ. ԲԵՐԲԵՐՅԱՆ

# ՄԻ ՄՈՄ ՎԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶՐՈՍԱՇՐՋԻԿԸ ՉԻ ԿՅՏԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ

301 թ. քրիստոնեությունն ազգովի ընդունեցինք որպես մեր կյանքը կարգավորող աստվածային սկզբունք. Հիսուս Քրիստոսի եւ Նրա առաքյալների քարոզությամբ սովորցինք, որ «առավել կյանքով» ապրելով, հոգեկան եւ բարոյական արժեքներին բարձր գնահատական եւ առաջնություն տալով՝ փոխվում է մեր էությունը, փոխվում է մեր գործելակերպը: Այո՛, քրիստոնյա մարդու գործերը տարբերվում են ոչ քրիստոնյայի գործերից: Տարբերվում են նրանով, որ քրիստոնյայի գործերում չեն իշխում բնազդական կիրքն ու ընչաքաղցությունը...

Ցավոք սրտի, երբ այսօր խոսում ենք 1700-ամյակին նվիրված միջոցառումների մասին, ոմանք հաշվարկ են անում, թե շահութաբեր բիզնեսի ինչ առիթ է ընձեռվում Հայաստանին կամ որոշ անհատների՝ Հայաստան այցելող զբոսաշրջիկներից, փոխանակ ասելու, թե հոգեւոր ինչ առնչություն եւ կապ կարող են ստեղծել նրանք հինավուրց քրիստոնյա այս երկրի եւ նրա ժողովրդի հետ: Ահա թե ինչու քրիստոնեության հետ անցյալում եւ ներկայում ոչ մի առնչություն չունեցող կազմակերպություններ եւ անհատներ, 1700-ամյակն իրենց շահութաբեր բիզնեսի գովազդ դարձնելով, ընդհուպ մինչեւ իսկ 1700-ամյակին նվիրված օղի գովազդելով, այն էլ ամենաէժան եւ անճաշակ մակարդակով, կարծում են, թե իրենց նպաստն են բերում 1700-ամյակի նշման նախաձեռնություններին եւ չեն զգում, թե որքան են նսեմացնում եւ արժեզրկում այդ տարեթվի բացառիկ նշանակությունը մեր ժողովրդի կյանքում: Անցյալում եւ այժմ բազմիցս ասել եւ ասում ենք. սիրելի՛ բարեկամներ, մի՛ վարկաբեկեք մեր Եկեղեցին եւ նրա նոսրացած հավատացյալ ժողովրդին ձեր բիզնեսի հոգեւորությամբ: Սա շատ ավելի լուրջ եւ պատասխանատու մի տարեդարձ է, որը պետք է նշանավորվի ազգովի մեր վիճակից սթափվելով եւ մի լուրջ հայացք գցելով մեր ընթացքին, թե «Յո՜ երթաս, հայ ժողովուրդ», թափանցելով մեր զավակների հոգեբարոյական աշխարհի ոլորտները եւ մեր ազգին անբարոյական ներկա վիճակից վեր հանելով, վիճակ, որի հետեւանքների վատ արձագանքները հասնում են Հայաստան՝ Լոս Անջելեսում, Բելգիայում, Ամստերդամում գտնվող նախկին հայաստանաբնակ բանտարկյալներից:

Սա մի նորովի սկիզբ պետք է լինի ազգովի լծվելու մի առաքելության, որ խորապես մղի մեզ փրկելու մեր ազգի պատիվը աշխարհով մեկ խայտառակվելուց: Սա քրիստոնեավայել կյանքի վերագինման, ապաշխարության եւ աղավաղված հոգիների փրկության, այսինքն՝ ազգի պատիվը վերականգնելու մի գործողության սկիզբ է հանդիսանալու, որ մեր ներիտասարդները չհայտնվեն այլ երկրների եւ հայրենիքի բանտերում: Սա մի նոր կյանքով ապրելու պատգամի պետք է վերածվի, պատգամ աստվածճանաչության, եղբայրասիրության, ինչպես եղավ 301 թվականին, որի շնորհիվ կյանքի կոչվեցին քրիստոնեական արժեքների կորողներ, եւ մեր ազգը դրանով գոյատեւեց նույնիսկ ամենադժվար պայմաններում, քանի որ հոգու աշխարհը, որ զինված է բարոյական արժեքներով, անպարտելի է, համբերատար է եւ տոկուն: Ահա մեր իմաստուն պապերից մեզ ժառանգված ճշմարիտ սկզբունքները, որ մեր ժողովրդին փրկեցին պատմության միջից անհետացումից:

Հոգեւոր-բարոյական արժեքների այսօրվա ժխտումը մեզ շուտով հասցրեց անդունդի եզրին, որը խաթարում է պարկեշտ մարդկանց հոգեկան անդորրն ու հավասարակշռությունը: Խոսքը մի ժողովրդի զգալի մասի հոգու առողջացման մասին է, տանելի եւ ընդունելի մի ընկերություն ստեղծելու մասին է, ստեղծելու ազնիվ զգացումով, գործնական, քրիստոնեական մեր արարքներով եւ ոչ թե ճառերով եւ խոսքի վաճառականությամբ, ինքնախաբեությամբ զբաղվելով:

Ժամանակն է, որ ամեն մի հայ, ինչ դիրք էլ որ գրավում է, մի պահ սթափվի իր գոռոզությունից եւ զգա իր հոգու իրական վիճակը եւ քաջությամբ խոստովանի, որ ինքը մերկ է հոգեւոր-կրոնական ապրումներից, որ երբեք լրջորեն չի փնտրել Աստծուն եւ կյանքի գործնական օրինակով չի փաստել, որ ինքը քրիստոնյա է:

Ցավալի վիճակում են այն անձինքը, ովքեր չեն ապրում հոգու աշխարհին հատուկ սնուցմամբ, ինչպես խղճալի են բոլոր նրանք, ովքեր կարողություն չունեն, ընդունակ չեն զգալու հոգեւոր աշխարհի պատճառած հոգեպարար վայելքները:

Ուստի, ինչպես 301 թ. ազգովի մկրտությամբ թեւակոխեցինք մի նոր՝ հոգեւոր ոլորտ, որ կոչվում է քրիստոնեական կյանքի ոլորտ, այնպես էլ այսօր պետք է լինի շարունակական մի ընթացք, որ յուրաքանչյուրս զգեստավորվենք քրիստոնեավայել առաքինությամբ. «զգենա՛լ զՔրիստոս»: Այդ դեպքում է, որ ամեն մի հայրենական բնակիչ կարող է ակնկալել, որ ընկերությունը առողջացնում է, եւ նրա տված պտուղները մահացու չեն:

Հուսանք, որ մեր պատասխանատու այրերը Հայաստան այցելող զբոսաշրջիկների առջեւ բացելու են հյուրընկալ եւ ազնիվ ընտանիքների դռներ: Ընտանիքներ, որոնք կարող լինեն, մատուցած հայկական հյուրընկալության հետ, նաեւ իրենց ազգային բարոյական եւ հոգեւոր օրինակելի սովորությունները ներկայացնել: Սա լուրջ մտահոգություն պետք է պատճառի մեր շատ ճարպիկ գործարարներին: Ուստի առաջարկում ենք նախքան զբոսաշրջիկներ ընդունելու ծրագիր կազմելը հարց տալ. մենք պատրա՞ստ ենք եւ ի վիճակի՞ ենք հյուրընկալելու նրանց մասնավոր ընտանիքներում: Կարծում եմ՝ ոչ:

Քրիստոնյա Հայաստանում զբոսաշրջիկներ հյուրընկալելու համար անհրաժեշտ է նրանց միայն հյուրանոցներում տեղավորել, որպեսզի թյուրիմացություններ չլինեն, եւ նրանք աղանդավոր ընտանիքների հետ չառնչվեն: Իսկ եթե անխուսափելի է նրանց մասնավոր տներում տեղավորելը, նախապես պետք է ստուգել, թե այդ ընտանիքի անդամները քրիստոնեական գիտելիքներ ունե՞ն, ծանո՞ք են Հայ Եկեղեցու սովորություններին, ավանդույթներին, պատմությանը, այդ ընտանիքի անդամներն առհասարակ բարոյական ինչ նկարագրի տեր մարդիկ են: Քրիստոնյա Հայաստանի հյուրանոցների պատերը պետք է զարդարել հայ եկեղեցական արվեստի նկարներով, մանրանկարներով, նշանավոր հոգեւոր հայրերի իմաստուն խոսքերն ու աղոթքները բովանդակող ցուցանակներով: Յուրաքանչյուր սենյակում պետք է լինի հայկական ոճով պատրաստված խաչ:

Զբոսաշրջիկների օդանավերում պետք է լինեն գրականություն Հայ Եկեղեցու մասին, Հայաստանի վանքերի ուղեցույց քարտեզներ՝ զարդարված քրիստոնեական գեղեցիկ խորհրդանշաններով: Օդանավերի վրա հաճելի կլինի գրել. «Բարի գալուստ քրիստոնյա Հայաստան - 301-2001 թթ.»:

Այն վանքերը, որոնք նախատեսված են որպես զբոսաշրջիկների այցելության ուխտատեղիներ, պետք է ունենան բարեկարգ ճանապարհներ, եւ վանքերի շրջապատը պետք է բարեկարգված լինի, իսկ ներսը՝ հարդարված:

Անհրաժեշտ է խստացնել վերոհիշյալ վայրերի պետական ապահովությունը, որ թյուրիմացություններ չլինեն, ինչպես լինում են բազմամարդ եկեղեցիներում:

Մայրաքաղաքի բոլոր մշակութային օջախներում հոգեւոր բնույթի միջոցառումներն անընդմեջ պետք է կատարվեն եւ ոչ թե տարվա ընթացքում մի քանի անգամ:

Որոշ հրապարակներում կարելի է զետեղել խաչքարերի եւ վանքերի մեծադիր նկարներ, եւ հնչեցնել հոգեւոր երաժշտություն: Եվ ընդհանրապես Հայաստանի ողջ մթնոլորտը պետք է շնչի մեկ նշանաբանով՝ Հայոց Մեծ Դարձի բուն բովանդակությամբ: Այլապես մի մոմ վառելու համար զբոսաշրջիկը չի այցելի Հայաստան 1700-ամյակի առթիվ:

# ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՇՈՅԱՆՔ Է ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԴԵՄ

Քրիստոնեական Եկեղեցին իր հերթին ընկերային մի միություն է: Ինչպես մարդկային բոլոր կազմակերպություններն ու հասատությունները, Եկեղեցին եւս ունի իր յուրահատուկ կառուցվածքներն ու սկզբունքները: Ինչպես այլեւայլ ընկերություններին անդամագրվողները, Եկեղեցու անդամ եղողները նույնպես ընդունում են որոշ կանոններ ու կարգեր, որոնք սահմանված են այդ հասատության կյանքը կազմակերպելու եւ վարելու համար: Սակայն Եկեղեցին որեւեւ որ մարդկային կազմակերպություն է եւ նման նույնատիպ միություններին, նույնքան, եւ էլ առավել, տարբեր է, ինքնատիպ ու անկրկնելի: Այո՛, որովհետեւ Եկեղեցին լոկ մարդկային հասատություն չէ, այլ աստվածամարդկային: Եկեղեցին զորացնում եւ առաջնորդում են ոչ թե մարդկային ջանքն ու ծիգը, այլ այն Զորությունը, Ով երկնից առավել, որպեսզի ամեն բան ուսուցանի եւ հիշեցնի այն ամենը, ինչն ավանդվեց Նրա համագոյակից Որդի Աստծու՝ Հիսուս Քրիստոսի կողմից. «Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին Հայրը կուղարկի իմ անունով, նա ձեզ ամեն բան կուսուցանի եւ ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ ես ասացի ձեզ» (Հովհ. ԺԴ 26):



Ահավասիկ այդ Զորությունը Նա է, Ով արարչագործության ժամանակ «շրջում էր ջրերի վրա» (Ծննդ. Ա 2): Այդ խոսացված Մխիթարիչը Ամենասուրբ Երրորդության Գ Անձն է՝ Սուրբ Հոգի Աստված, Ով երկնից երկիր էր իջնում՝ զորացնելու եւ առաջնորդելու այն հասատությունը, որի միջոցով ոիսի շարունակվեր Բանն Աստծու սկզբնավորած փրկագործությունը:...Սոս 2000 տարի է մեզ բաժանում Վերնասան Հոգեգալուստից: Սակայն Ս. Եկեղեցու կյանքում դա միակ Հոգեգալուստը չէր. Քրիսոս Աստծու Եկեղեցում ամեն օր Հոգեգալուստ է: Այո՛, զի ամեն օր Եկեղեցու զավակներից՝ սուրբ ավազանից, ծնվում են նորանոր քրիստոնյաներ, որովհետեւ ամեն օր նորոգ մկրտյալները դրոշմվում են սրբալույս մյուռոնով, որովհետեւ ամեն օր մեր տաճարներում սրբազան խորհուրդներ եւ արարողություններ են կատարվում, որոնց միջոցով էլ հավատացյալը հաղորդակից է լինում Սուրբ Հոգու երփներանգ շնորհներին, ըստ այդմ էլ՝ զորանում եւ ուժ ու կարողություն ստանում հաղթահարելու աշխարհիս հոգեկործան նեղությունները ու փորձությունները: Իհարկե, աղոթքին ու աստվածապաշտությանը սոսկ ֆիզիկական ներկայությունը եւ մեքենայական կցորդությունը չէ, որ մեզ հարաբերության մեջ են դնում Սուրբ Հոգու հետ, այլ ներքին մղումը, ջերմեռանդությունն ու հավատը. չէ՞ որ մեր Տերն ինքն ասաց՝ «Ըստ ձեր հավատի թող լինի ձեզ» (Մատթ. Թ 29): Այո՛, մեր նվիրման ու հավատի չափով է մեզ տրվում:

...Հիրավի, երբ ինքախույզ մի հայացքով դիտում ենք Հայոց Եկեղեցուն, ակամայից զարմանում ենք տեսնելով այն մեծ հակասությունը, որն առաջացել է աստվածամարդկային այդ հասատության մեջ: Հայոց Եկեղեցին իր հավատքով, իր հրամանակարգ վարդապետությամբ, իր աստվածաշնչական համակարգով, իր սրբոց դասով անխորտակելի, անխոցելի, անպարտելի ու անընկճելի է: Սակայն մեր Մայր Եկեղեցում կա մի «ախիլլեսյան գարշապար», դա նրա անդամների (թե՛ աշխարհական եւ թե՛ հոգեւորական) անհոգությունն ու անտարբերությունն է: Ցավալի է, բայց Հայոց Եկեղեցին, որպես հավատացյալների միություն, շա՞տ է տկարացել:

Շարունակությունը էջ 8

# ՎԱՂԱՊԵՏԱՊԱՏՈՒՄ ԱՐՔԱՅԵՒ

## ՊԵՏԱԿԱՆ ՍՈՏԵՅՈՒՄԸ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ ՆԱԽԸՆԹԱՑԻՆ

Ս. Մեսրոպ Մաշտոցի հանճարով կատարված հայ գրերի գյուտը իր դարակազմիկ նշանակությամբ, ամփոփելով հազարամյակների խորքից եկող հայոց էթնո-հոգեւոր լեզվամտածողության արգասիքները, նոր լիցք հաղորդեց քրիստոնեությամբ հոգիլցված դրա հետագա ընթացքին՝ պատմության փոթորկալից ալիքների վրա հայտնված հայ ժողովրդի համար լինելով ազգապահպան վահան: Ս. Մաշոցը (361-440 թթ.) իր աստվածաշնորհի գործունեության մեջ միայնակ չէր. նրա մեծ գործին աջակից եւ սատարող եղան Հայոց Վռամշապուհ արքան (388-414 թթ.) եւ Ս. Սահակ Պարթեւ կաթողիկոսը (388-439 թթ.):

Այդ մեծ իրադարձությունը հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցավ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Հայաստանի պարսկա-հռոմեական առաջին բաժանումից (385 թ.) հետո Մեծ Հայքի թագավորության հետագա գոյությունը վտանգվեց, եւ Վռամշապուհ արքայից մեծ խիզախություն պահանջվեց, այդ մեծ գործի իրագործմանն ուղղված, Հայոց աշխարհի ուժերի հովանավորը լինելու:

Այս առումով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի հանգամանքի վրա, որը քաղաքական բնույթի էր: Վռամշապուհն իր գահակալության ժամանակաշրջանում ի սկզբանե կաշկանդված է եղել իր եղբոր՝ Խոսրովի պարսից արքունիքի կողմից ձերբակալմամբ: Պարսից արքա Շապուհ III-ը (383-388 թթ.) Հայաստանի արեւելյան մասն իր ազդեցության տակ պահելու համար, Խոսրովին (385-388 թթ.) թագավոր ուղարկելով, Վրամշապուհին, փաստորեն, պատանդ էր պահել արքունիքում: Նույնը տեղի ունեցավ, երբ Վռամշապուհին որպես թագավոր ուղարկելով Հայաստան՝ Խոսրովին ձերբակալեց: Պատճառը եղել էր Խոսրովի քաղաքականությունը Հայաստանի բաժանված երկու մասերի վրա թագավորելու ուղղությամբ, ինչպես նաեւ Սահակ Պարթեւին առանց Տիզբոնի՝ Սասանյան արքունիքի համաձայնության Հայոց կաթողիկոս ճանաչելը: Խոսրովը Վահրամ IV-ի (388-399 թթ.) եւ Հազկերտ I-ի (399-421 թթ.) գահակալության օրոք մինչեւ 414 թ., պահվեց Պարսկաստանում եւ միայն Վռամշապուհի մահվանից հետո վերադարձավ Հայաստան եւ գահակալեց մեկ տարվա ընթացքում: Խոսրովի ձերբակալությունը նաեւ նախազգուշացում էր Վռամշապուհին՝ իր հետագա ինքնուրույն քայլերը սահմանափակելու համար: Այդ իրավիճակում Հայոց արքան սատար եղավ հայ նշանագրերի ստեղծման եւ պետականորեն ընդունման գործին: Այդ ուղղությամբ քայլերն այնպիսի հմտությամբ էին կատարվում, որ պարսից արքունիքը ոչ մի խոչընդոտ չհարուցեց դրա իրականացման ճանապարհին:

Ինչպես հետեւում է պատմիչների հաղորդումներից, թե՛ Սահակ Պարթեւը եւ թե՛ Վռամշապուհը, մինչ այդ գործում Մաշտոցին օգնելը, իրենք ինքնուրույնաբար հանգել էին հայ գրեր ունենալու անհրաժեշտությանը: Հայոց կաթողիկոսի մտահոգությունը պարզ էր, քանի որ Աստվածաշունչը հոգեւոր թելերով ժողովրդի հետ կապել նշանակում էր այն նրա լեզվամտածողությանը հարազատ ոճով հասցնել հայ ժողովրդի հոգուն, ինչին խանգարում էր միայն օտար լեզուներով Ս. Գրքի առկայությունը: Վռամշապուհ արքան եւ Սահակ Պարթեւ կաթողիկոսն արդեն մտահոգ էին հայ նշանագրերի խնդրով, երբ Մեսրոպ Մաշտոցը նրանց դիմեց դրա իրագործմանը ձեռնամուխ լինելու առաջարկով:

Ըստ Կորյունի՝ Մաշտոցը Գողթնում եղած ժամանակ ավետարանելիս, լեզվական դժվարությունների առջեւ կանգնելով, մտածմունքի մեջ ընկավ, «եթէ որպիսի՞ արդեօք ելս իրացն գտանիցէ.» (Կորյուն, «Վարք Մաշտոցի», Երեւան, 1981, էջ 88): Սահակ Պարթեւին Մաշտոցը «պատրաստական զտանէր նմին փութոյ հաւանեալ... Ապա ելանէր նոցա պարզեւական յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, եւ ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել»: Մաշտոցը եւ Սահակը իրենց մտածմունքների մասին տեղյակ պահեցին Վռամշապուհ արքային, որը նրանց հայտնեց ասորի եպիսկոպոս Դանիելի մասին, «որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի» (նույն տեղում էջ 90):

Այսպիսով, հայերեն նշանագրերի ստեղծման այդ փուլին վերաբերող՝ Կորյունի շարադրանքից հետեւում է, որ Մաշտոցը հայ գրեր ունենալու անհրաժեշտությունն զգաց հենց իր ավետարանական առաքելության ընթացքում, Սահակին նա պատրաստ գտավ այդ գործի համար, իսկ Վռամշապուհը տեղյակ էր Դանիել ասորու ստեղծած գրերի մասին:

Ըստ Մովսես Խորենացու՝ Մաշտոցը Գողթնում եւ Այուձիքում ուսուցանելիս բավականին նեղություն կրեց, որովհետեւ ինքն էր կարդացողը ու թարգմանողը, եւ եթե իր բացակայության ժամանակ ուրիշն էր կարդում, ապա աստվածաշնչական խոսքն անհասկանալի էր մնում ժողովրդին՝ թարգմանիչ չլինելու հետեւանքով: Ուստի նա միտք դրեց հայերեն լեզվի համար տառեր ստեղծել:

Մովսես Խորենացուց իմանում ենք մի մանրամասնություն, որը լրացնում է Կորյունի հաղորդումը Վռամշապուհ արքայի մասին: Հաբեթ քահանան խոստացել էր Դանիել եպիսկոպոսի կողմից հայերեն լեզվի համար հարմարեցված տառերը բերել, քանի որ Վռամշապուհը, հույներին եւ պարսիկներին հաշտեցնելու համար մեկնելով Միջագետք, բավական նեղություն էր կրել թարգմանական գործին տիրապետող կրթված թարտուղար չունենալու պատճառով այն օրից, երբ Մեսրոպն արքունի դռնից հեռացավ: Թագավորը ոչ մի ճարտար դպիր չէր կարողանում գտնել, որովհետեւ պարսկական գիր էին օգտագործում: Վռամշապուհը, վերադառնալով Հայաստան, «գտանէ ժողովեալ առ մեծն Սահակի եւ Մեսրոպի զամենայն եպիսկոպոսունս, հոգեալ զգիտ դպրութեան Հայոց, զոր զգացուցին արքային. եւ նա պատմեաց նոցա զասացեալսն վանականին: Զոր իբրեւ լուան՝ թախանձէին զնա փոյթ զանպիսեացն առնել պիտոյից»: Վռամշապուհ արքան Խադրովի տոհմից Վահրիթին ուղարկում է, եւ Հաբեթի միջոցով Դանիելից բերում են «կարգեալ ըստ ձեռոյ օրինակի յունականին գվարդնոցն գրեալ շարագիր» տառերը եւ հանձնում Սահակին եւ Մաշտոցին: Նրանք այդ տառերով ուսուցանում են, սակայն առանց դրական արդյունքի, քանի որ «ոչ լինել բաւականին այնու նշանագրոք ստոյգ հղովել զհեգեենայ բառից հայկականաց հագներգաբար» (Մովսէս Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Երեւան, 1991, էջ 325-326):

Այսպիսով՝ Խորենացուց իմանում ենք, որ Վռամշապուհն ինքնուրույն էր հանգել հայերեն գրեր ունենալու պահանջին, իսկ Սահակն արդեն Մաշտոցի կողքին էր այդ գործում:

Ըստ Ղազար Փարպեցու՝ ասորերեն լեզուն չհասկացող եկեղեցականների ու ժողովրդի ջանքերն ապարդյուն էին դառնում եւ երանելի Մաշտոցը, այդ մասին երկար խորհելով, մտածում էր. «Մանաւանդ թէ զոմն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնի եւ ոչ մուրացաձոյ բարբառով, շահել զոգիս արանց եւ կանանց առ հասարակ յամենայն եկեղեցիս բազմութեան» (Ղազար Փարպեցի, «Պատմութիւն Հայոց», «Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Երեւան, 1982, էջ 30):

Մաշտոցի իր մտահոգության մասին հայտնում է Սահակին, որը քաջալերում է նրան եւ ավելացնում. «Քանզ զառուս ինչ յառաջ ոչ բացումս, առեալ բանք յեկեղեցւոյ յաղագս կարօտութեան այոպիսի պիտոյից ասացեալ է ուրեմն ցարբայ, թէ տեսի նշանագիրս հայերէն առ ունեմն եպիսկոպոսի ի գեղ միում, եւ բացատրն յիշէր զասացեալսն, քանզի եւ ինձ նա պատմեաց»: Այնուհետեւ Սահակը Մեսրոպի հետ գնում են Վռամշապուհի մոտ, նրան հայտնում գործի կարեւորության մասին: Թագավորը, հիշելով Հաբեթի խոստումը, դեսպան է ուղարկում նրա մոտ Դանիելից գրերը բերելու համար (նույն տեղում էջ 32): Ուրեմն, Փարպեցին հաղորդում է, որ Մաշտոցը ենթադրել է, որ կային հայերեն լեզվով նշանագրեր, ինչը չի կապվում Դանիելի մոտից բերված տառերի հետ, որոնց մասին նա հետո է իմանում:

Կարելի է տեսնել, որ գրերի գյուտի նախընթացի մասին Կորյունի, Մովսես Խորենացու եւ Ղազար Փարպեցու երկերում տարբեր կարգի մանրամասնություններ են պարունակվում, որոնք միմյանց լրացնելով հնարավորություն են տալիս մանրամասնորեն պատկերացնելու Վռամշապուհ արքայի, Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ Ս. Սահակ Պարթեւի մտածմունքները եւ գործողությունները: Մասնավորապես պարզվում է, որ Վռամշապուհը նախքան Սահակի եւ Մաշտոցի իրեն դիմելը, արդեն ուղիներ էր փնտրում հայ նշանագրեր ունենալու համար, քանի որ Հայոց թագավորությունը կառավարելիս խիստ կարիք ուներ մայրենի լեզվով արքունի գործերը վարելու, իսկ այդ նշանակում էր հայ գրեր ունենալու անհրաժեշտություն: Ուստի Ս. Մեսրոպ Մաշտոցն իր մտահոգումն իրագործելիս, ի դեմս Վռամշապուհ արքայի, գտավ ոչ միայն պաշտպանպես սատարողի, այլեւ գաղափարակցի: Այսպիսով, Վռամշապուհ արքայի եւ Ս. Սահակ Պարթեւի կողմից Ս. Մեսրոպ Մաշտոցի հայերեն գրերի ստեղծման գործին գլխակից լինելը բխում էր ինչպես Աստվածաշնչի եւ եկեղեցական արարողությունների թարգմանության, ազգային-մշակութային կյանքի հզոր կերպով պահպանման, այնպես էլ երկրի պետական գործերը մայրենի լեզվով վարելու անհրաժեշտությունից:

*ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր*

# ՀԻՇԱՐԺԱՆ ԻՐԱԴԱՐ ԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

## 2000 թ. դեկտեմբերի 28-ին Գուգարաց թեմում բացվեց առաջնորդարան, եւ օծվեց եկեղեցի

Գուգարաց թեմի առաջնորդ գեղաշնորհ Տեր Սեթուռի եռիսկոպոս Չուլջյանի 4 տարվա հեռեւողական ու տքնաջան ախտաանհի շնորհով 1999 թ. վերջապես հաջողվեց ձեռք բերել 19-րդ դարի մեծահարուստ Թաիրովի նախկին ամառանոցը, որն առանց վարանման կարելի է համարել Վանաձորի ամենագեղեցիկ եւ յուրօրինակ ճարտարապետական ոճ ունեցող եզակի շենքերից մեկը: Շենքը շատ էր տուժել տարիների անգործությունից ու երկարաժամկետ, այն խիստ վերանորոգման կարիք էր զգում: Շենքի վերանորոգման ախտաանհները նախատեսված էր իրականացնել 2 փուլով:

2000 թ. դեկտեմբերի 10-ին ավարտվեցին 1-ին փուլի ախտաանհները, որի մեջ մտնում էին շենքի ամրացումն ու վերակազմումը եւ առա կից եկեղեցու ու տահի կառուցումը: Տահը հեռագույում պետք է ծառայի կարիքավորներին՝ որպես բարեգործական ճաշարան:

2-րդ փուլի ախտաանհները, ֆինանսավորման դեպքում, նախատեսված է իրականացնել 2001 թվականին: Դանիել են առաջնորդարանի կահավորում, տարածի պարտադրաշատում, բարեկարգում եւ կանաչապատում, առաջնորդարան տանող ճանապարհի բարեկարգում, ավտոտնակների կառուցում:

Առաջնորդարանի, եկեղեցու եւ կից տահի շինարարական ախտաանհների ծախսը կազմել է 152.689 ԱՄՆ դոլար, որի մեծ մասը ֆինանսավորվել է ԱՄՆ-ի արեւմտյան թեմի առաջնորդարանի կողմից՝ թեմի առաջնորդ գեղաշնորհ Տեր Վազգեն արեռիպոլոգոս Հովսեփյանի անմիջական նախաձեռնությամբ եւ թեմական խորհրդի որոշմամբ:



Վերոհիշյալ գումարի 40.000 ԱՄՆ դոլարը Գուգարաց թեմի առաջնորդարանին կից եկեղեցու եւ տահի կառուցման համար տրամադրել է նույն թեմի Սուրբ Սարգիս եկեղեցու խաչատուրյան դպրաց դասը՝ աստնաթոս Սիմոն Աճըրիաչօղլուի գործուն աջակցությամբ:

Ս. Սարգիս եկեղեցու կահավորման համար 3000 ԱՄՆ դոլար է նվիրաբերել տեր եւ տիկին Սարգիս եւ Ս. Աճըրիաչօղլուի գործուն աջակցությամբ:

Դեկտեմբերի 28-ին մեծ հանդիսավորությամբ տեղի ունեցավ Ս. Սարգիս եկեղեցու օծման արարողությունը եւ առաջնորդարանի բացումը: Արարողությունները կատարեցին Գուգարաց թեմի առաջնորդ գեղաշնորհ Տ. Սեթուռի եռիսկոպոս Չուլջյանը եւ Սմերիկայի արեւմտյան թեմի առաջնորդ գեղաշնորհ Տ. Վազգեն արեռիսկոպոս Հովսեփյանը: Արարողությանը ներկա էին մարզային իշխանության ներկայացուցիչներ, բազմաթիվ հյուրեր եւ հարյուրավոր հավատացյալներ: Բոլոր ներկաներն օրհնեցին եւ արժանին մատուցեցին բարերարներին ու շինարարներին, ովքեր 5 ամսում Վանաձոր քաղաքին եւ Գուգարաց թեմին ոգեղեցին նմանօրինակ նվեր: Ի դեմ, ինչպես խոսացել էր Սեթուռի սրբազանը, ամբողջությամբ ոգեհոգվել են շենքի ճարտարապետական ուրույն ոճն ու արտաքին տեսքը:

Այսուհետեւ նորակառույց Ս. Սարգիս եկեղեցում, 2001 թ. հունվարի 6-ին Ս. Ծննդյան տոնից սկսած, ամեն կիրակի կմատուցվի Սուրբ Պատարագ:

Առաջնորդարանի շենքի առաջին հարկում կտեղակայվեն ՔՊՔԿ-ն, Երիտասարդաց, Տիկնանց միությունները: Կյանքի կոչվի «Վերնատան» գաղափարը. կկազմակերպվեն գրական-մշակութային երեկոներ, հանդեսներ, որտեղ կհավաքվեն գրողներ, մշակույթի գործիչներ:

Հատկանշական է, որ այսօր արդեն Վանաձորում ամենօրյա ժամերգություններին կմիախառնվեն երկու Ս. Աստվածածին եւ նորակառույց Ս. Սարգիս եկեղեցիների զանգերի ձայները:

Գուգարաց թեմի ողջ հոգեւոր դասի, թեմի առաջնորդ գեղաշնորհ Տեր Սեթուռի եռիսկոպոս Չուլջյանի եւ հավատացյալների անունից հայտնում ենք մեր խորին երախտագիտությունն ու շնորհակալությունն Ամենայն Հայոց Հայրապետին եւ ԱՄՆ արեւմտյան թեմի առաջնորդ գեղաշնորհ Տեր Վազգեն արեռիսկոպոս Հովսեփյանին:

Ինչպես նաեւ մեր երախտագիտությունն ենք հայտնում Լոս Անջելեսի Ս. Սարգիս եկեղեցու Խաչատուրյան դպրաց դասի բոլոր անդամներին, հոգեւոր հովիվ արժանաքաջի Տեր Նարեկ քահանա Մաստայանին, աստենաթոս ոյարոն Աճըրիաչօղլուին, Սեթյան ընտանիքին եւ մեզ օգնության ձեռք մեկնած բոլոր հավատացյալներին:

Թող բարձրյալն Աստված օրհնի եւ պահպանի հանգույն հայության, որն անմնացորդ սիրով ու ծառայությամբ միշտ կանգնած է Մայր Եկեղեցու եւ հայրենիքի կողքին:

*Դիվան Գուգարաց թեմի*

# ՔՐԻՍՏՈՍԻ ԱՇԽԱՐՀԸ

*Ձեզ ենք ներկայացնում Փրկչի՝ 2000 թվականին Ռուսաստանի տարածքում հայտնաբերված ժայռաթաղերի մասին պատմող նյութը՝ որոշ կրճատումներով:*

Այն մասին, որ Կարաչայ-Չերքեզիայում գոյություն ունի Հիսուս Քրիստոսի ժայռաթաղերը, լսել էի տասիցս դեռևս մանկությանս տարիներին: Նա պատմում էր, որ Տիրոջ թաղերը տեսել էր 20-րդ դարի սկզբներին՝ Բասալփաշին ավանից (այժմ՝ Չերքեսկ) Ձելենչուկի եկեղեցի կատարած ուղևորության ժամանակ: Հենց այս եկեղեցու մոտակա ժայռին է գտնվում սրբաթաղերը: Այդ ժամանակներում լեռներ կարող էին բարձրանալ միայն մեծ սայլախմբերով՝ այն էլ կոզակների պահակախմբի ուղեկցությամբ: «Այդ դեմքը նկարված է այն թաքինակից, որով Քրիստոսը Գողգոթա բարձրանալիս սրբել է քրտնած դեմքը,- պատմում էր տատս,- իսկ թաքինակը հոգևորականները բերել են Կոստանդնուպոլսից այն ժամանակներում, երբ այնտեղի թագավորը հրամայել էր այրել եւ ոչնչացնել բոլոր սրբաթաղերները»: Տատիս մեծ եղբայրը հավատում էր, որ պատկերը բաված է ոչ թե թաքինակից, այլ վարշամակից, որում փաթաթել էին խաչից իջեցված Քրիստոսին եւ որի վրա էլ Նրա համբարձումից հետո ի հայտ էր եկել այդ պատկերը: Սակայն նրանք իրենց պատմությունն ավարտում էին ցիրտ միանման, թե՝ ժայռի վրա նկարն ավարտվելուց հետո թաքինակը (կամ վարշամակը) խորհրդավոր կերպով անհետացել է:



Հենց այդ խորհրդավոր անհետացումի պատճառով էր, որ ամբողջ կյանքիս ընթացքում հիշում էի այդ պատմությունը: Եվ երբ 2000 թվականի ամռանը լսեցի, թե Կարաչայ-Չերքեզիայում գտել են Փրկչի մի հին սրբաթաղեր, որոնցից ամեն գնով տեսնել այն...

Մեծ Ձելենչուկի աջ ափին՝ Բուկովո ավանից երկու կիլոմետր հեռու, ուր ապրում են Ասդաֆիզիկոսների հատուկ ասղաղիտարանի աշխատակիցները, գտնվում է Նիժնի-Արխիզսկ ոչ մեծ քաղաքը: 7-12-րդ դարերում այս վայրերը պատկանել են Արեւմտյան Ալանիային: Գիտնականների կարծիքով՝ քրիստոնյա առաջին քարոզիչներն այստեղ են եկել Բյուզանդիայից, Աբխազիայի վրայով, սկսած 7-րդ դարից: Հետագա դարերում նրանց ճանկի կտրուկ ածը կաղված է պատկերապատների՝ Բյուզանդիայից գանգվածաբար հեռանալու հետ:

Վաղ քրիստոնյաների մեջ փիլ չէին նաեւ Արեւելքի ժողովուրդներ, որոնց ավանդույթում, ինչպես հայտնի է, արգելված էր մարդ պատկերել: Այդ էր պատճառը, որ Փոքր Ասիայի ուղղափառ հոգեւորականությունը խստորեն դատապարտում էր պատկերապատներին՝ համարելով, որ թույլ, խղճուկ մարդուն տրված չէ Աստծուն պատկերելը. Հիսուսին մարդկերդ պատկերող վարպետը չարագործ հերետիկոս էր համարվում, ճանգի նա երկուսի էր մասնատում Աստվածամարդ Հիսուսին:

730 թվականին Բյուզանդիայի կայսր Լեւոն 3-րդ Իսավրացին հրամայեց մի հրովարտակ, որով արգելում էր պատկերագրությունն ու պատկերապատությունը: Այդ օրենքը ժողովրդական բուռն զայրույթի ալիք բարձրացրեց: Պատկերամարտները, որոնք Կոստանդնուպոլսում փորձում էին հրամարակավ ոչնչացնել Քրիստոսի առավել պատված պատկերները, ամբոխի կողմից հոշոտվեցին: Որպես պատասխան այս միջադեպի՝ սկսեցին զանգվածաբար մահապատժի ենթարկել պատկերապատներին: Ի պատասխանություն պատկերապատների՝ հանդես եկավ բյուզանդական նավատորմը. նավերը նույնիսկ մոտեցան Կոստանդնուպոլսին, բայց այրվեցին «հունական կրակով»: Այդ հայրենասյակի հեսագա ողջ ընթացքում կայսրությունում անխնա ոչնչացվեցին սրբաթաղերները, որմնանկարները, խճանկարները: Առավել խստորեն հետապնդվում էին եկեղեցականները. հոգեւորականներին կենդանի-կենդանի թաղում էին պատերի մեջ, խեղդամահ անում ծովում, այրում խարույկների վրա: Պատկերապատները սիրված էին այստեղից փախչելով փրկել իրենց կյանքը: Նրանցից շատերը հայտնվեցին Կովկասում:

Այս փախստականների քարոզչական եւ լուսավորչական անկտրում աշխատանքները տվեցին իրենց պտուղները: 916 թվականին, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկոլայ Միստիի որդի, Նիժնի-Արխիզսկ ավանում սկսվեց Արեւմտյան Ալանիայի հիմնական բնակչության զանգվածային մկրտությունը: 10-11 դդ. սկսեցին կառուցել արդեն քարաեղ եկեղեցիներ: Այստեղ էր տեղակայված Ալանիայի եպիսկոպոսական կենտրոնը, որին կից գործում էր Հովհաննես Մկրտչի ոչ մեծ եկեղեցին: Այս կենտրոնի շուրջը համախմբվող բնակչության աճին նպաստեց Մեսախի մեծ ճանապարհը, որն անցնում էր մեծաքաղաքներ:

1230 թ. Ալանիան ենթարկվեց թաթար-մոնղոլական արշավանքի, եւ Հյուսիսային Կովկասի հետ միասին Ալանիայի տարածքները մտան Ոսկե Հորդայի մեջ: Պատմաբանները ենթադրում են, որ մինչ արշավանքը հոգեւորականները հասցրել էին մոտակա լեռներում կառուցված պահոցներում թաքցնել ալանական մետրոպոլիտների եւ բյուզանդական պալատի ու Կոստանդնուպոլսի պատրիարքության միջեւ եղած համակարգական փաստաթղթերը: Չի բացառվում, որ այդ թաքստոցներում եղել են նաեւ քրիստոնեական սրբությունքներ, որոնք ինչոր ժամանակ փրկվել էին հենց պատկերապատների ձեռքով:

1889 թ., Գեորգույն Սինոդի հրամանով, Նիժնի-Արխիզսկում բացվեց Ձելենչուկի եկեղեցին՝ «պահպանելու եւ վերաշինելու համար Կովկասի հին քրիստոնեական տաճարները եւ նպաստելու ավետարանական ուսմունքի լույսի տարածմանը շրջակա չմկրտված այլադավանների եւ մահմեդականների մեջ»: Հոգեւորականները վերականգնեցին ալանական որոշ քարաեղ տաճարներ՝ իհարկե չկանխամտածված ոչնչացնելով նաեւ որմնանկարների պահպանված մասերն ու հետքերը:

Փրկչի եւ Աստվածամոր հայտնաբերված այս ժայռաթաղերները մեծապես պատված են եղել վանականների կողմից: Մոտակայքում կառուցելով քարե խցեր՝ նրանք այստեղ ամիսներ են անցկացրել աղոթելով:

1920-ական թվականների կեսերին բոլշեւիկները փակեցին եկեղեցին: Լուրեր էին շրջում, թե այն ժամանակ նրանք նաեւ բռնագրավել եւ Լենինգրադի կրոնի եւ աթեիզմի թանգարան են տարել Թուրինյանին համանման վարշամակը: Ինչ հիմք կար նման խոսակցությունների՝ հայտնի չէ: Այդ սրբության հետքը գտնել մեզ չհաջողվեց: Իսկ չէ՞ր կարող այդ վարշամակը, եթե իսկապես այն պահվել է Կովկասում, դարակեսերին հայտնվել Եվրոպայում: Ասենք՝ թեկուզ մեկնումեկը մինչ թաթարների արշավանքն արդեն դուրս էր տարել: Չէ՞ որ հայտնի է, որ Թուրինյան վարշամակը Ֆլորենցիայում հայտնվել է 1375 թվականին, իսկ ուր է եղել մինչ այդ, ոչ ոք չգիտի:

1980-ականների կեսերին Նիժնի-Արխիզսկ քաղաքի տարածք հայտարարեցին պետական թանգարանարգելանոց: Հետաքրքիր է, որ հնագետներն այստեղ պեղումների ժամանակ հայտնաբերել են գործածված մի փոքրիկ կտոր, որի տարիքը համընկնում է Քրիստոսի՝ հայտնի վարշամակին վերագրված ժամանակներին:

Անցյալ տարի հնագետներից մեկը թանգարանի աշխատակիցներին տեղեկացրել էր Հիսուսի եւ Տիրամոր ժայռաթաղերների մասին: Շուտով թանգարանի եւ նրանց աջակցելու եկած Ասդաֆիզիկոսների հատուկ ասղաղիտարանի աշխատակիցները գտել են Փրկչի պատկերը:

Զգուշանալով զբոսաշրջիկ-բարբարոսներից՝ մի ողջ տարի այդ մասին չեն համարձակվել խոսել: Փասը հրապարակվեց միայն տեղանքը մեծաղյա ցանցով պատելուց հետո՝ հետաքրքրասերներին չափից ավելի մոտ գտնվելուց հեռու պահելու նպատակով: Այդ ընթացքում սրբաթաղերն ուսումնասիրել են արվեստաբանները, պատկերագիրները ու հոգեւորականները: Նրանց մեծ մասը, ինչպես նաեւ թանգարանի աշխատակից Անատոլի Դեմակովը գտնում են, որ պատկերը կատարված է 8-9-րդ դարերում, քանի որ լուծված չէ եկեղեցական կանոնի համաձայն, եւ Փրկչի գլխին էլ բացակայում է լուսապսակը:

Ժամանակաշրջանն առավել ճշգրիտ որոշելու համար պահանջվում է 25 հազար ռուբլի, մի գումար, որը գավառական թանգարանի համար ուղղակի աստղաբաշխական թիվ է: Սակայն առանց այդ էլ պարզ է, որ Հիսուսի գտված պատկերը հնագույնն է Ռուսաստանի տարածքում: Անկասկած, բյուզանդական նկարչի այս ստեղծագործությունը պետք է դասել համաշխարհային կերպարվեստի գլուխգործոցների շարքը: Այս ինքնատիպ հուշարձանը, իհարկե, պահանջում է համապատասխան պահպանություն: Քանզի, չնայած դժվարամատչությանը, այնտեղ են բարձրանում շատ մարդիկ: Չի բացառվում, որ մեկնումեկը վերցնի մուրճն ու սուրբ ժայռից, որպես մասունք, պոկի-տանի իր հետ:

Սրբաթաղերից փիլ հեռու հնագետները հայտնաբերել են նաեւ երկու վաղքրիստոնեական գերեզմանոց: Հետաքրքիր է, որ հնագետները պատկերացնել, որ դրանց մեջ կարող է լինել եւ նկարչի աճյունը: Սակայն այդ մասին ոչ մի արդյունք. դամբարանները թալանվել են «սեւ հնագետների» կողմից...

*ՏԱԻՍԻԱ ԲԵԼՈՒՍՈՎԱ*
*«Սովետենոն սեկրետնո» (թիվ 12. 2000 թ.)*
*թերթի մեկնաբան*
*Թարգմ. Ա. Ս.*

---

*Ողջո՛ւն ընդ քեզ, Նո՛ր Տարի,*
*Լիցի գալուստ քո բարի,*
*Եւ արգասիք լիաձոց:*

ՂԵՈՆԴ ԱԼԻՇԱՆ

## ՆՈՐ ՏԱՐԻՆ

*Այս գիշեր հագուած-սրգուած նոր տարին*
*Առտուան լոյսին կ'սպասէ տենդոտ.*
*Ոգիներ անդարձ կորզեցին տարի՛ն*
*Մեր գրկէն հինին ծայները ծանօթ:*

*Նոր տարւոյ ընծայ պայծառ լուսինկան*
*Մազեր է գիւղին լեռները բոլոր.*
*Երգերը ծերին, ծիչերը մանկան*
*Կ'արձագանգեն թունդ խաղերով մոլոր:*

*Իղձերու շարք մը պլլուած ուսին՝*
*Վառ յոյզերու մէջ կ'որէ զայն ուժգին.*
*Բորբոքած հուրհովն յոյզերու անէջ*
*Կը վառին սիրտերն ըղձանքներու մէջ:*

*Գիշերուան վերջին պահերուն լըռին,*
*Ձայներն ու լոյսեր յանկարծ կը մարին.*
*Եւ բեհեզներովն կաղոյս կամարին*
*Պճնուած՝ աշխարհ կուգայ նոր տարին:*

*ՄԻՍԱՔ ՄԵՇԱՐԵՆՑ*

## ՆՈՐ ՏԱՐԻ

*Եկար հանդարտ, նույն հանկեցդով եւ կշռությամբ,*
*Կարծես չէիր դու Նոր տարի, այնպես եկար.*

*Բարի՛ գալուստ, մեր շեմից ներս ոտդ բարի՛,*
*Նոր դուռ բացվող մեր անկատար երազների:*

*Աղերս ունեմ. թող մեր երկիրն խաղաղ լինի,*
*Կյանքը՝ պարզեւ աստվածային, շարունակվի.*
*Եթե հանկարծ երկրից չմվի ազնիվ հոգին,*
*Տե՛ր, վերստին մեզ պարգեւի՛ր Հիսուս Որդին:*

*Կյանքն է երազ մի լուսավոր, բյուր էջերով,*
*Մարդիկ՝ ծրագ, մեկ-մեկ կանթեղ վառվող հերթով,*
*Շատերն են զուր վառվում ցերեկն, անհետ կորչում,*
*Իմաստունը մութ խավարն է լույսով պճնում:*

*Եկ ներս շեմից, հազա՛ր բարով, հույսի՛ տարի,*
*Ես չգիտեմ ի՞նչ ես բերում... գալըդ բարի:*

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

# ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

*«Սուրբ ծնունդ»*
*ԼԻԼՕ (ԼԻԼԻԹ ԱՐՍԵՆՅԱՆ), 15 տ.*

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Աստվածահայտնություն անվամբ տոնում է Հիսուս Քրիստոսի Ծնունդն ու Մկրտությունը:

Այս միացյալ տոնը Հայոց Եկեղեցին նշում է հունվարի 6-ին, բայց տոնակատարությունները շարունակվում են մինչեւ հունվարի 13-ը, իսկ այդ օրը Տիրոջ Անվանակոչության տոնն է:

Ինչ հանգամանքներում ծնվեց Փրկիչը:

Հերովդես արքան հրամայել էր իր թագավորության ամբողջ տարածքում մարդահամար կատարել: Ըստ այդ հրամանի՝ ամեն ոք պետք է գրանցվեր իր հայրենի քաղաքում, ուստի Սուրբ Կույս Մարիամն ու Հովսեփը Գալիլիայի Նազարեթ քաղաքից տեղափոխվում են Բեթղեհեմ: Այդ փոքրիկ քաղաքում իջեւանատեղ չգտնելով՝ երանք ստիպված ապաստանում են քաղաքից դուրս գտնվող մի քարայրում, որը որպես նախարտուն էր ծառայում: Հենց այդտեղ էլ՝ ծղոտի վրա, ձմռան ցուրտ գիշերը ծնվում է Աստվածորդին:

Հիսուսի ծնունդյան առաջին վկաները լինում են հովիվները՝ բարի ու ազնիվ անձինք: Հենց նրանք էլ մարդկանցից առաջինն են լինում, որ օրհնում ու փառաբանում են Աստծուն՝ Իր Որդուն աշխարհ ուղարկելու համար: Հովիվների հրճվանքը միանում-ձուլվում է հրեշտակների բազմության հնչեցրած ցնծալից այս օրհներգին. «**Փառք Աստծուն բարձունքներում, երկրի վրա խաղաղություն և հաճություն մարդկանց մեջ**» (Ղուկ. 2/14):

Փրկչի ծնունդը փառաբանվում է նաեւ երկնքում գերբնական աստղի հայտնությամբ: Հոգեւոր հայրերից մեկի բացատրությամբ՝ «Սուրբծնունդյան աստղն իր լուսավորությամբ առավել էր արեգակից, որովհետեւ ցերեկով էր երեւում»:

Այդ լուսափայլ աստղի առաջնորդությամբ՝ Արեւելքից Բեթղեհեմ են գալիս երեք մոգեր (թագավորներ)՝ երկրպագելու նորածին Հիսուսին: Մանուկ Աստվածորդուն մոգերն ընծայում են թանկարժեք նվերներ՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս:

Հոգեւոր հայրերն այդ նվերների խորհուրդը բացատրում են հետեւյալ կերպ. ոսկին խորհրդանշում է Հիսուսի Թագավոր լինելը, կնդրուկը՝ Քահանայապետ, այսինքն՝ Աստված լինելը, իսկ զմուռսը՝ Փրկիչ: Այդպիսով մոգերը հաստատում են, որ Հիսուս Քրիստոսը մեր անվախճան Թագավորն է, Աստվածն ու Փրկիչը:

Ծնվելով Սուրբ Կույսից՝ Հիսուս Քրիստոս Աստված մարմնապես հայտնվում է մարդկանց՝ Իր կենդանի օրինակով ցույց տալու կատարելության հասնելու ճանապարհը: Եվ եթե Սուրբ Ծնունդն Աստծու մարմնական հայտնությունն է, ապա Հիսուս Քրիստոսի մկրտությունը Աստծու հոգեւոր հայտնությունն է:

Տիրոջ Մկրտությունը նշվում է Սուրբ Ծննդյան հետ, քանի որ Հիսուս Քրիստոսը մկրտվել է Իր ծննդյան նույն օրը՝ 30 տարի անց:

Երբ լրանում է Հիսուս Քրիստոսի 30 տարին, Նա Նազարեթից գնում է Հորդանան գետի մոտ, որպեսզի մկրտվի Հովհաննես Կարապետից: Այդ օրերին Հրեաստանի տարբեր շրջաններից մարդկանց հոծ խմբեր էին հավաքվում Հովհաննեսի շուրջը, որը նրանց քարոզում էր մեղքերի թողության, երկնքի արքայության մասին եւ մկրտում ապաշխարողներին:

*«Փոքրիկ Հիսուսը տաճարում»*
*ՋՈՒԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (10 տ.)*

Տեսնելով Հիսուս Քրիստոսին՝ Հովհաննես Մկրտիչը, իրեն անարժան համարելով, ասում է. «**Ինձ պետք է, որ Քեզնից մկրտվեմ, եւ Դու ի՞նձ մոտ ես գալիս»:** Իսկ Հիսուսը նրան պատասխանում է. «**Թո՛ւյլ տուր հիմա, որովհետեւ այսպես վայել է, որ մենք կատարենք Աստծու ամեն արդարություն**» (Մատթ. 3/14-15):

Երբ Հիսուսը մկրտվում է, իսկույն բացվում է երկինքը, եւ Աստծու Հոգին աղավնակերպ իջնում է Նրա վրա: Նույն պահին երկնքից մի ձայն ասում է. «**Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճությունը**» (Մատթ. 3/17):

Մկրտվելով Հորդանան գետում Հիսուսը սրբեց ջուրը՝ օրինակ ծառայելով մարդկանց՝ սրբվելու մեղքերից, որպեսզի մկրտությամբ՝ մարդը վերածվի Սուրբ Հոգու շնորհներով ու դառնա երկնային արքայության ժառանգորդ:

Երբ լրանում է Քրիստոսի ծնունդյան 8-րդ օրը, Նրան տանում են տաճար եւ, հրեական սովորության համաձայն, թլփատում՝ անունը դնելով Հիսուս, ինչպես Գաբրիել հրեշտակապետն էր ավետել:

Թլփատության արարողությունը հրեաները կատարում էին Աբրահամ նախահոր ժամանակներից սկսած՝ ի նշան Աստծու հետ ուխտի: Հիսուս Քրիստոսը թլփատվեց՝ կատարելու օրենքը, որպեսզի Իր օրինակով ուսուցանի հնազանդվել աստվածային օրենքներին, այսինքն՝ Նրա թլփատությունը հավատարմության եւ հնազանդության նշան է:

Հիսուս Քրիստոս Աստված ծնվեց՝ մարդկանց սրտերում հաստատելու արդարություն, ճշմարտություն, խաղաղություն ու սեր եւ այդ ամենով մարդկանց արժանացնելու երկնային արքայությանը, ինչը եւ վկայում է Նրա անունը՝ Հիսուս Քրիստոս, որ նշանակում է Օծյալ Փրկիչ, այսինքն՝ երկնային փառքի, հավիտենականության արժանացնող:



*«Քրիստոսի մկրտությունը»*
*ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ (11 տ.)*
*Ք. Սամավիր*

## ՀՈԳՈՒ ԽՈՍՔ

Ամեն տարի, երբ գալիս է Ամանորը, ես ցանկանում եմ փոքրիկ լինել ու հավատալ, որ առավոտյան բարձիս տակ կգտնեմ Ձմեռ պապիկի թողած նվերը: Սակայն ես փոքրիկ չեմ, եւ Ձմեռ պապն ինձ նվեր չի թողնում: Չնայած դրան՝ Ամանորն ինձ համար հույսերի ու իղձերի իրականացման սկիզբն է, առաջին քայլը: Ես ցանկանում եմ հին տարում թողնել իմ վատ սովորությունները, բնավորության վատ գծերն ու նոր տարի մտնել մաքրված, ձերբազատված վատից: Ուզում եմ նաեւ, որ Ամանորի հետ բոլորիս այցելեն ուրախությունը, բարությունը, մաքրությունը, եւ որ նրանք չլքեն մեզ ողջ տարվա ընթացքում:

Շնորհավորում եմ «Սիրո մոլորակի» բոլոր բնակիչներին՝ Ամանորի ու Սուրբ Ծննդյան առիթով: Մաղթում եմ նրանց համերաշխություն եւ այնպիսի անսահման սեր, որի շնորհիվ Երկիր մոլորակը վերանվանվի Սիրո մոլորակ:

*ԳՈՌ ՆԱԶԱՐՅԱՆ*

## Ե՞Վ ԷՐ ԼՈՒ՝

Ո՞վ էր Հակոբի որդին սիրելի,
Նա որդին էր նաեւ Ռաֆելի:
Ասում էին նրան մյուս եղբայրները,
Սակայն նեցուկ էր նրան միշտ Տերը:

(Ինքգոիսէ)

Ո՞վ էր աղքատ անապատում,
Առաքելությանն իր դատապարտվում,
Ուղտի մազից հագուստ հագնում,
Մորեխով ու մեղրով սնվում:

(Ինքնին ոգեշնչիչ)

**ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**

*ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ*

## ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Ավետիս մեծ՝ սուրբ խորհրդի,
Գաղտնի խորհուրդն հայտնվեց մեզ.
Ավետիս, Հոր լույսն է ծագել
Իր ծոցածին էությունից.
Ավետիս, որ հայտնվեց Աստված
Էակներիս մեջ հողեղեն,
Ավետիս, պետն հրեշտակաց
Գաբրիելն երկիր է ուղարկվել.
Որ ավետիս տա սրբուհուն
Դստեր Դավիթ թագավորի.
Ավետիս քեզ. Աստվածամա՜յր.
Ուրա՛խ եղիր. Տերն է քեզ հետ:
....Ավետիս մեծ՝ տիեզերքին.
Այսօր հնչեց ձայն բարձունքից.
Ավետիս ողջ ցեղին մարդկանց.
Այսօր Որդին է մկրտվում:
Ավետիս ձեզ. աղամորդի՛ք.
Տեսաք Հոգին աղավնակերպ.
Ավետիս, որ հայտնվեց այսօր
Խորհուրդը Սուրբ Երրորդության.
Ավետիս միշտ պիտի երգենք՝
Քրիստոս օրհնյալ է հավիտյան:

*Էջի պատասխանատու՝ ԱՆՆԱ ԱԼՈՅԱՆ*

# ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՀՈՅԱՆՔ Է ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԴԵՄ

*Սկիզբը էջ 4*

Մեր մարմնեղեն կարծրացած ուրտի բանական անդասանոներն անմշակ ու անխնամ են, մեր հոգիներում չեն ոչդաբերում Սուրբ Հոգի Աստծու սերմանած հոգեւոր սերմերը: Մենք մոռանում ենք, որ աստվածային տնտեսության տնտեսներ ենք, եւ որ գալու են չսպասված օրն ու ժամը, երբ Ամենակալի առջեւ հաշվետու ենք լինելու: Եվ վա՜յ նրան, ում թեկուզ շաս կամ փիչ էր տրվել, եթե նույնությամբ, նույն շնորհներով ներկայանա՝ առանց դրանք կրկնապատկած, հարյուրապատկած. «...ով որ ունի, նրան ոիտի տրվի, իսկ նրանից, որ չունի, ոիտի վերցվի եւ այն, ինչ որ ունի» (Ղուկ. ԺԹ 26): Հետեւաբար մենք, որ մկրտված ենք, մենք, որ մյուռոնով դրոշմվելիս սացել ենք Սուրբ Հոգու յոթնարփյան շնորհները (հավատ, հույս, սեր, համբերություն, զորություն, իմաստություն եւ եռանդ աստվածապաշտական), ինչո՞ւ չենք փախչում մեղից, ինչո՞ւ չենք ապրում աստվածահաճո կյանքով, ինչո՞ւ չենք բազմապատկում մեզ տրված շնորհները աստվածային... Հիշենք, որ Սուրբ Հոգու շնորհը նաեւ անշիջելի հուր է, որը հրակեզ է անում բոլոր նրանց, ովքեր մերժում են աստվածայինը եւ ջանում են ապրել ըստ իրենց ցանկությունների ու հաճույքների, ովքեր անտարբերության ոիտիզ ոգով են համակվում:

Արդ, քանի որ նոր հազարամյակի արշալույսին մեր Մայր Եկեղեցին ոիտի տոնախմբի իր լույս հավատը որոնես ոչեսական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանը, ահա եւ դա իսկ հույժ պարտավորեցնում է, որ յուրաքանչյուր հայ քրիստոնյա հավատացյալ ոչ թե բավարարվի սոսկ իր քրիստոնյա կոչումով, այլ ջանա քրիստոնեությունը դարձնել իր կյանքը, իր ապրելակերոը, իր մտածելաձեւը, միով բանիվ՝ իր կյանքը ոգեղենացնի, եկեղեցիացնի, որովհետեւ լոկ ոիտակով քրիստոնյա բոլորն էլ կարող են լինել, սակայն իրական, ճշմարիտ քրիստոնյա՝ «Աստծու յուղով օծված» (Թեոփիլոս Անտիոքացի), գրեթե ոչ որ չի կարողանում լինել... Լսո՞ւմ եք, չի՝ կարողանում: Իսկ ինչո՞ւ: Տե՛ր Աստված, ինչու: Այո՛, զի մեզանից յուրաքանչյուրի սրտում «փառավորապես» բնակություն է հաստատել կեղծավորություն կոչվող զազրելի հրեշը, որն իր սատանայի կենցաղավարությամբ ոչ միայն սպանում է մեր հոգին, այլեւ մեզ Տիրոջ առջեւ ոիոզ է դարձնում եւ Ամենակալի սոսկալի նզովքին արժանացնում. «Վա՜յ ձեզ կեղծավորներիդ...» (Մատթ. ԻԳ 13-32):

Համընդհանուր կեղծավորությունը, ինչպես փուշ, խեղդում է բոլոր այն բարի սերմերը, որոնք այլեւայլ միջոցներով սերմանվում են մեր սրտերում: Ահա հենց սա է պատճառը, որ մենք լսում ենք, բայց չենք իմանում, նայում ենք, սակայն չենք տեսնում (Երեմ. Ե 21):

«Եղիցի լոյս»... Դարձյալ ու կրկին թող լո՛յս լինի: Այո՛, ո՛վ Լույս Աստված, միայն Դու կարող ես մեզ փրկել, մեզ բժշկել, մեզ օգնել, մեզ նորոգել, մեզ իմաստուն դարձնել, մեզ Քո ծրիաստուր շնորհներով լուսո որդիներ անել, այլեւ՝ Քո երանյալ արքայության ժառանգորդ դարձնել. «....ոչ որ չի կարող գալ դեռի ինձ, եթե նրան չձգի Հայրը....» (Հովհ. Զ 44):

«Ո՛վ Տեր մեր, Տե՛ր, փութա՛, զազգ մեր համայն փրկեա՛»: ամեն:

*ԱՐԹՈՒՐ ԴՊԻՐ*
*(Արթուր սրկ. Կարապետյան)*

# ԽՈՐՀԱՐԱՆՆԵՐ. ԹՌՉՈՒՆՆԵՐ

## ԿԱՔԱՎ

**Պղաբերության, սիրո, գեղեցկության խորհրդանիշ: Հունասանում կաքավը համարվել է Ափրոդիտի, իսկ հնդկա-իրանական մշակույթում՝ կանացի գեղեցկության եւ նրբագեղության խորհրդանիշը:**

**Սակայն այս թռչնի նկատմամբ վաղ քրիստոնեության շրջանից ի վեր դրսեւորված անբարյացակամ վերաբերմունքը հիմք հանդիսացավ հռոմեական պատկերագրության մեջ կաքավը ներկայացնելու որոշես անմաքուր ճանապարհով ձեռք բերված հաջողության, իսկ նրա ճիչը՝ սատանայի գայթակղության խորհրդանիշ:**

**Հայ եկեղեցու խորանների մեկնություններում կաքավը խորհրդանշում է պոռնիկ կանանց: Որոշ խորաններում՝ մինչ դարձի եկած Մարիամին, որոշներում էլ՝ Թամարին, Ռահաբին, (որոնք մարդելով՝ ավետարանիչների մոտ համարվեցին Փրկչի նախամայրեր, որ մեկնվում է որպես հեթանոսների հարսնացած եկեղեցի), Հռուբին եւ Բերսաբեին:**

# ԵՐԿՕՐՅԱ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՎԱՐՁԱՊԵՏ ՊԱՏՄԱԿԱՆ ՍՐԲԱՏԵՂԻՆԵՐԸ

Օրերս Ստեփանակերտ քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու ծիսակատար քահանա Տեր Մինասի առաջնորդությամբ կազմակերպվեց ուխտագնացություն նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին:

Նախօրոք մշակված ծրագրի համաձայն այցելության առաջին ուխտավայրը Պտկի Ս. Գեւորգ վանքն էր, որը հայտնի է նաեւ Պտկես Բերդ անունով:

Երբ տեղ հասանք, վանքն արդեն կամաց-կամաց սուզվում էր գիշերվա գիրկը: Օրը ամպամած էր, ճայթում էր ամպրոպը, ելացուցիչ լույսով մի պահ լուսավորում վանքը:

Շրջակա անտառներից փայտ դիզելով՝ խարույկ վառեցինք:

Վառած մոմերից ու ծխած խունկից, կարծես, նորից վերածնվեց եկեղեցին, նորից հարություն առավ «խորհրդային 70-ամյա մեռելներից» ու մեր ըստջած աղոթքները տարավ դեպի վեր՝ դեպի ամենաբարձրյալ Աստված:

Ամբողջ գիշեր պահապան հրեշակների պես չքնեցինք: Տեր հոր շրթերից բխած շարականները շունչ պարգեւեցին հինավուրց վանքին: Այն նորից լցվեց աստվածային ջերմ սիրով:

Կամաց-կամաց լույսը բացվեց:

Լույսի հետ մեկտեղ բացվեց անզուգական տեսարան: Այստեղից երեւում են ամբողջ Հայոց աշխարհը՝ պատմական Ուտիք նահանգը՝ Պարսավ մայրաքաղաքով (այժմ՝ Բարդաղ), հռչակավոր Գանձասարը, հինավուրց Կաչաղակբերդը, Ղարաբաղի լեռնաշղթան՝ 40 կույսերը, Դիզափայտի լեռները, Արցախի ամենաբարձր կետը՝ Մռավը:

Սակայն եպիսկոպոս Բարխուդարյանի վկայությամբ «Վանքս շինուած է հայոց ՉԺԲ (1263) թուականին Աշոտ թագաւորի որդի Շահան շահից»:

Ամբողջը վանական համալիրը հնում շրջապատված էր պարսպով, որի առանձին հատվածներն են միայն մնացել:

Ափսոս, հետզհետե քայքայվում է եկեղեցու տանիքը: Այն վերանորոգման խիստ կարիք ունի:

Այստեղից ուղեւորվում ենք դեպի Մեծառանքի Ս. Հակոբավանք: (Մեծառանքը Արցախի հին գավառներից է):

Պատմական աղբյուրները վկայում են, որ Ս. Հակոբավանքը Հայոց արեւելից կողմանց հեղինակավոր ուխտատեղիներից էր, եղել էր եպիսկոպոսանիստ եւ երբեմն՝ կաթողիկոսանիստ (ապացույցը՝ այստեղի գեղեցմանաքարերի արձանագրություններն են):

Մ. Բարխուդարյանը գրում է, որ Հակոբավանքի եկեղեցին կառուցել են Հասան-Ջալալի ծնողները՝ Վախթանգն ու Խորիշահը: Վանքի հիմնադրման ու առաջին շինարարի կառուցման ժամանակը հայտնի չէ: Մ. Կաղանկատվացին (7-րդ դար) գրում է, որ Մեծառանքը եպիսկոպոսանիստ վանք է:

Այս վանքի անվան հետ է կապված Իսրայել Օրիի անբաժան ընկեր, հայ ազատագրական շարժման մեծ գործիչ Մինաս վարդապետ Տիգրանյանի անունը: Օրիի մահից հետո Մինաս վարդապետը միջնորդի պաշտոն էր կատարում ռուսական կայսրի եւ Գանձասարի վանքի «Հայոց ժողովի» միջեւ:

Այժմ Ս. Հակոբավանքն անմխիթար վիճակում է: «Ուխտավորները» չեն խնայում ոչինչ: Պատերից հանված, գետնին թափված են խաչքարեր, շրջված են մեր հոգեւոր առաջնորդների տապանաքարերը:

Ես, վանքի մուտքի մոտ կարդալով խորհրդային ժամանակաշրջանից մնացած ցուցանակը («Պահպանվում է կառավարության կողմից»), այլ կերպ էի պատկերացնում նրա այսօրվա վիճակը:

Մեծառանքի Ս. Հակոբավանքից հեռացանք մեծ ափսոսանքով. մեր նախնիներից մեզ ժառանգածը չենք կարողանում պահպանել, էլ ինչո՞ւ ենք նեղանում մեր հարեւաններից, որ խանդում են մեր պատմական կոթողները:

Նեղ արահետն անտառով ձգվում է դեպի Գառնաքար գյուղ, որտեղից էլ ոիտի անցնենք Խաչեն գետը, որ հասնենք Վանք գյուղ:

Հեռվից, դեռ գյուղ չհասած, բարձր բլրի վրա երեւում է Վանքի վանքը՝ հինավուրց Գանձասարը, որը մեկ հայտնվում է ծառերի, ժայռերի արանքում, մեկ՝ կորչում:

Բարձրանում ենք սարն ի վեր եւ մտովի զրուցում Խաչենի տիրակալ Հասան-Ջալալի հետ, որի նուրբ դիվանագիտության շնորհիվ երկրամասը փրկվեց մոնղոլների ավերածություններից, հետագայում էլ միջնորդ հանդիսացավ Կիլիկիայի Հեթում թագավորի ու մոնղոլ-թաթարների միջեւ՝ չհարձակման եւ փոխօգնության դաշինք կնքելու: Նա հայրենասիրության ու հզորության վկայությունը ոչ միայն ամուր բերդերն են, այլեւ գեղեցկագույն Գանձասարն է:

Երբ հասանք Գանձասար, արդեն մութ էր: Պարսպի դարպասները ես բաբելով՝ մտանք ներս: Աստվածային այս .սուրբ վայրում տիրում էր անսահման լռություն... Ոչ որ չհամարձակվեց խախտել երկնային խաղաղությունը:

Պահապան հրեշակների պես ամբողջ գիշեր հսկեցինք այս անդորրը...

Սա մեր ուխտագնացության երթուղու վերջն էր:

*ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՐԶՈՅԱՆ*
*Ասկերանի շրջան*
*Ծաղկաբաղի միջնակարգ դպրոցի*
*պատմության եւ կրոնի ուսուցիչ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝** Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝** Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն
**Գլխավոր խմբագիր՝** Աստղիկ Սամբոլցյան
**Գրանցման վկայական՝** 624
**Խմբագրության հասցեն՝** Ք. Վաղարշապատ, Ս. Գայանե եկեղեցի, Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն
**հեռախոս՝** (0+31) 56780
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստորագրված է 16. 1. 2001 թ.
**Տպաքանակը՝** 2500 **Գինը՝** 50 դրամ: